



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.	Օրագիր եւ լրագրութիւն.....	Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ.	Վիճար Հիւկո	Լ. Բ.
ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ.	Ծաղկի եւ Պաղոյ Առաքելութիւն.....	ԵԱՆՔԻՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ.	Մշուհին	Յ. ՍԷԹԵԱՆ
ՆՈՐԱՎԷՊ.	Մեռեալը (Օկիիսթ ԺՈՐԺԷԼ).....	Վ. ՏԱՐԱՆԴԻՆ
ԳԱԽԱՌԱՅ ՎԻՃԱԿԸ.	Երգչատ	Խ. Թ.
ԶԱՆԱԶԱՆՔ.	40 Թիւր.....	
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲ. ԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Ազգային.....	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ.	(Կղապիւ տը Մոնթեքէն) Թարգմ.....	Մ. ՉՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
»	վեցամսեայ.....	Քառ. » »
ԳԱՆԱՆԵՐ	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դահ. արծաթ
Մէկ Թերթին Գինն է.....	»	60 փարայ

Մասիսի Խմբագրութեան վերաբերեալ ո՛ր եւ է գործիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
Ղալաթիւս Երաստունեան Խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Կը խնդրուի մեր ՊՈԼՍԵՑԻ ԵՒ ԳԱՌԱՅԻ ԱՅՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԷՆ, որոց պայմանաժամը լրացած է և որք տակաւին մեզ շրկած չեն իրենց բաժանորդագրին, առ մեզ փութացնել զայնս մինչեւ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՕԴՈՍՏՈՍ 1:

Կը խնդրուի նմանապէս իրենց բաժանորդագրութիւնը նորոգել ու զոչ անձերէն որ փութան մինչեւ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՕԴՈՍՏՈՍ 1:

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 43 Յունիս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտոնայի վրայ պանքայի	111
3 » » (վճռկնին)	110 3/8
3 » Բարիզի » (պանքայի)	22 77 1/2
» » » (վճռկնին)	22 85

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բոսնիոյի

	Գահեկան
Երեկ Երեկոյ Գոց. (Միաց. D. Սէրի)	48 24
Պորտային Գոցուեկէն վերջը »	48 24
Բերայի մէջ »	—
Առաւօտուն բացուեցաւ »	48 24
Բարձրագոյն Գին »	48 24 1/2
Նոսազագոյն »	48 24
Կէս օրին »	48 21

Փոխառութիւն 1858)	
» 1862) A. Սէրի Գ. Կ. Ա. Ո.	33 40
» 1860)	
» 1863) B. » Կ. »	49
» 1872)	
» 1865)	
» 1869) C. » Գ. »	48 20
» 1873)	

ԻՆԻՖԻԷ ԵԳԻՍՏԱԿԱՆ

Երեկ Երեկուն Գոցուեցաւ	72 20
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	72 45
Կէս օրին	72 12 1/2

ԲԱԺՆԵՏՈՐՍՔ

Սօրիթէ Ժէնէրալ..... Գ. Կ. Անգլ. Լ. 3 22

Գրէտի Ժէնէրալ.....	» » Օսմ. »	7 6
Պանքա Գանա.....	» » » »	4 30
Սոս. Շանժ Է վայեօր. »	» » » »	3 34
Բրաժուէյ.....	» » » »	295
Բուժէլիի Երկաթուղի.....	Ֆր. »	43
Օպիկտիսիոն առ Բրիթիթէ.....	» »	—
Բաժնէթուղթ Լաւրիօմի.....	» »	60

ԵՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 25 Յունիս, ժամ 3 վայր. 43 Երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ	99 11/16
Օսմ. » Սէրի Գ. բացուեցաւ	46 7/8
» » » Գոցուեցաւ	46 13/16
» » » Ա. »	33 1/4
» » » Բ. »	49
» » » Գ. »	46 7/8
Օթօման 1871.....	67 3/4
Փոխառութիւն 1877.....	80 3/4
Պանք Եթօման.....	42
Ռուսական փոխառ. 1873.....	92 3/4
Եգիպտական միացեալ (Ինիֆիէ).....	65 1/4
» առանձն. (Բրիթիթէ).....	86 3/4
Տայրա Սանիէ.....	62 1/4
Տօմանիալ (փոխառ. Բօչիլտ).....	84 1/2
Հունգարական պարտաթուղթ 40/0.....	—
Փոխառութիւն Բարիզի վրայ.....	—

Վիեննա, 25 Յունիս, ժամ 4 Երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ.....	124 55
Օսմանեան Երկաթուղի.....	24

Բարիզ, 25 Յունիս, ժամ 3 վայր. 43 Երեկոյ

Յընասական Ռանթ 4 1/2 0/0.....	110 12 1/2
» » 3 0/0.....	81 45
Օսմանեան քոնսոլիտէ Սէրի Գ. բացուեցաւ	47 05
» » » Գոցուեցաւ	46 97 1/2
» » Սէրի Բ. »	48 65
» » Գ. »	46 90
Օսմանեան Երկաթուղի.....	42 50
» Բէթիի Բաժնէթուղթ.....	—
Պանք Եթօման.....	555
Գրէտի Լիօնէ.....	—
» Ֆոնսիէ.....	1360
Բաժնետոմս Լիօնի.....	1247 50
Սուէզի ջրանցք.....	2161 25
Ռուսական 5 0/0 1877.....	100
Իտալական Ռանթ.....	97 43
Եգիպտական միացեալ.....	327 50
Սպանիական (արտաքին).....	59 3/4
Բրիթիթէ Բրիթ.....	391 25
50/0 Հելլենական.....	337 50
2էք Լոնտոնի վրայ.....	25 19

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 ՐԻ ՏԱՐԻ

1885 ՅՈՒՆԻՍ 15

ԹԻԻ 3774

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 15 ՅՈՒՆԻՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Բ.

Ռընտօ Լուդովիկոս ԺԳ. ի բժիշկն էր եւ ընդհանուր խնամակալ աղքատաց . շատ նախանձորդներ ունեցաւ որոց յաղթեց պաշտպաններու շնորհիւ . Ռիչիէօ կ'աշխատակցէր իրեն եւ Մաղարէն կը գնահատէր զինքը . արքայն՝ որ կը վախճար բարձրաձայն խօսելէ , յաճախ կը դիմէր Կալէիին եւ հանրային գործոց վրայ իւր կարծիքները անով կը յայտնէր . այնքան կարեւորութիւն ըստացաւ որ ամէն մարդ գրեթէ անոր վրայ եւ անով կը խօսէր . լուր մը որքան ալ ըստոյգ ըլլար , հերքելու համար բաւական էր ըսել թէ « Կաղէթը չէր գրած » . կամ եթէ գրուած ըլլար սուտ մը , կրնար ստուգութեան տեղ անցնիլ : Կարողութիւն ունեցողները կը գնէին , հաւաքածոյ կը կազմէին . ուրիշներ գոհ կ'ըլլային ընթերցողին մը վճարելով կարդալէ յետոյ . այլը իրենց մէջ դրամ հաւաքելով բաժանորդ կը գրուէին : Կալէի հրատարակուեցաւ անխափան մինչ ցմահ Ռընտօի (1685 հոկտ . 25) . յետոյ 1778 էն սկսեալ պաշտօնական թերթ եղաւ Լուդովիկոս ԺԵ. ի հրովարտակալ :

Ոչ նուազ ժողովրդական դարձաւ նաեւ Courrier Français զոր Ռընտօի որդիքն

եւ աշխատակիցը, Սահակ ու Եւսեպոս՝ երկու բժիշկը՝ հրատարակեցին ի Փարիզ իրենց հօր ծրագրին համեմատ : « Գուրիէ » ուրբաթ օրերը կ'ենէր , բայց 48 ժամ չանցած կիւրակէին 600-800 տող ոտանաւորի վերածեալ ու կերպարանափոխ եղած կը տարածուէր քաղքին մէջ . այս ընդն էր Սէն Ժիւլիէն անուն գրչի տէր մարդ մը : Ժողովուրդը կը խոնէր գրասենեկին առջեւ . այնքան բուռն էր ընթերցողներու հետաքրքրութիւնը որ թերթը ձեռքէ ձեռք կը յափշտակուէր եւ այդ միջոցին ծեծ ու փետ անպակաս էր :

* * *

Քաղաքական օրագրէն ետքը ծնան արուեստագիտական թերթերը . եւ այս տեսակին առաջինն է Petites Affiches : Ռընտօ « Հասցէից Գրասենեակ » մը բացած էր . անոր տուժարներուն մէջ կ'երթային արձանագրել տալ իրենց անունները եւ հասցէն պաշտօն մը գործ մը ուզողները կամ թէ անոնք որ վաճառելու կամ գնելու ապրանք մը , հանդերձ մը , գետին մը , տուն մ'ունէին , եւ այսպէս բազմաթիւ խնդիրք եւ առաջարկք կը ձեւանային . Բըթիթ-Վ.Ֆ.Ֆիլ ուրիշ բան չէր ուրեմն եթէ ոչ այդ արձանագրութեանց հաւաքածոյն : Այս թերթը տասն օրեայ պարբերական մ'էր որ յետոյ տարբեր ձեռաց մէջ խիստ ասործելի եղած է գրական տարերօք խառնուելով . բայց վերջը մենավաճառը պետութեան անցնելով (1811) , ծանուցումներու յատուկ թերթ մ'եղած է :

1640 էն ի վեր գրական նորութիւն մը մտած էր Ֆրանսա . այն թէ ինչ որ գրուէր վիճաբանութիւնը , դէպք , լուրեր եւ ոտա-

նաւորով կը գրուէր : Ֆրանսի բերք մ'էր
ու եւ այս տեսակին մէջ շատ յաջողեցաւ
Լօռէ, աղքատ երիտասարդ մը որ իւր գիւ-
ղէն ելած ու Փարիզ եկած էր բաղդախն-
դութեամբ : Ասոր բնական եւ անարուեստ
ոճը եւ նախընծայ տաղերը շատ ախորժելի
թուեցան ոմանց աւագանեաց ոյր իրեն
պաշտպան նաեւ կանգնեցան :

Լօռէ հետամուտ եղաւ մանաւանդ օրի-
որդ տը Լօնկվիլի (Մառի տ'Օռլէան) աչքը
մտնելու , որուն մայրը Գօնաէի քոյրն էր եւ
հայրը սերած էր հոչակաւոր Տիւնօպէն ,
գաղտածին որդի Լուի Ա. Օռլէանի դքսին .
այնքան գեղեցիկ էր կը պատմեն այս իշ-
խանուհին որ Լառօշքիւքս «սրտին ար-
ժանի եւ աղւոր աչերուն հաճելի ըլլալու
համար թագաւորներու հետ կուի ըրի ,
աստուածոց հետ ալ կը պատերազմիմ» ը-
սած էր : Օրիորդը , յետոյ Նրմուռի դքսու-
հի , խիստ գոհ էր իւր պուէտէն եւ բնա-
կանաբար կը փախաբէր որ գրուածները ըն-
դունելութիւն դտնէին , քանզի համբաւոյ
երագաթնիշ թեւերուն վրայ կը տանէին իւր
անունը հոչակել ի սիւնուս աշխարհի : Լօ-
ռէի նամակները անթիւ մանրամասնու-
թիւններ կը պարունակեն Լուդովիկոս ԺՎի
անշախահասութեան եւ թագաւորութեան
առաջին տարիներու գէպքերուն Այս մար-
դուն ոճին եւ ժամանակին գրական ճաշա-
կին վրայ գաղափար մը կուտայ մի հատ-
ուած ձօնեալ առ կին ոմն . Լօռէ օրիորդի
մ'արկածը կը նկարագրէ .

« Մատղաչ սիրուն եւ գեղանի օրիորդ
« մը , օրուան մէկը յորս հեծնելով ձիէն
« կ'իյնայ ոչ առանց քշիկ մը վնասուելու :
« Զեֆէր կարծելով թէ Ֆրէն էր այն՝ թէ եւ
« գեղեցկագոյն էր կոյսն քան զսա՝ օրիոր-
« դին չըջագլեստը վեր կը վերցնէ . . . »
Բայց ամէկոտ հանդիսատեսը չկրնար մնա-
ցածը պատմել
ամրան տօթագին օր մը կարծես թէ ձիւն
էր եկեր դալար գետնին վրայ . ուստի
ուրեքեակ մը կը ձօնէ .

Գանձ թագուցիկ , գեղ երկաւոր ,
Պերճ հանգրուան գերութեան ,
Ի քո տեսիլ ձիւն թոյր
Փառք քո աչքան բարձրացան ,
Մինչ զի աշխարհ համօրէն ,
Դիցազնական «այդ» կոչեն ,
Զի գահ թէ չէ քեզ համար
Գէթ նստարանն է յարմար :

Ինչպէս կը տեսնուի , Ֆրանսերէնը իւր ու-
ճով եւ ոտանաւորներով շատ չէր խնայեր
համեստութեան . այլ թէպէտ խեղկատակ՝
Լօռէի գրութիւնը , երկդիմի , անբարոյական
ու լպիրշ տեսակէն չէին :

Լօռէն ետքը Մայօլա արձակը միացու-
նելով ոտանաւորին՝ նոր ճանբայ մը կը յոր-
դէ օրագրութեան եւ թատերգակ դերա-
սան մը , Տօնօ տը Վիգէ , կը հիմնէ «Մէնքիւր
Կալան» հանդէսը , որ դար մ'եւ կէս իւր
հրապուրանաց հաւասար մեծ համբաւ մը
կը վայելէ շահեկանութեամբ : Լուրեր , պատ-
մութիւններ , բանաստեղծական գրուածք-
ներ եւ ամէն ինչ որ կը վերաբերի հանրա-
յին եւ առանձնական կեանքի , սոյն հանդէ-
սին մէջ նախակածեւ կը յերկրունին հան-
ձարիմաց շարայարութեամբ : Քառասուն
տարի շարունակ տը Վիգէ այս հանդէսը հը-
րատարակեց . «Մէնքիւր» ի կարեւորութիւնը
հետզհետէ աւելացաւ , տնօրէնը 23 հազար
Ֆրանք թոշակ կ'ստանար , յետոյ կառավա-
րութիւնը իրեն կը սեփականէր թերթը ո'չ
թէ իւր շահուն , այլ գրական մարդոց օգ-
տին ծառայեցունելու նպատակաւ . հա-
սոյթներու մեծ մասը ամսականներու կը
յատկացուէր , մնացորդը աշխատակից երի-
տասարդներու . հանդէսը երկու մասի կը
բաժնուէր Ա. Mercure de France Բ. Mercure
historique et politique : Ֆօն/Թանէլ և Մա-
լէ Տիւբան ձէնէվրացին շատ զարգացուցին
զայն : Արդէն տիեզերական օրագրի մը
բոլոր կարեւորութիւնը ստացեր էր . Մալէ
Տիւբանի գրչին ներքեւ գործիք մ'եղաւ
Սահմանադրական կուսակցութեան , Ֆրան-
սայի յեղափոխութեան առաջին տարիները :

* * *

Գրական եւ ուսումնական հանդէսները
ծաղկեցան 1663 ին . անոնց հայրը կը հա-
մարուի Journal des Savants , հիմնադրը Տը-
նի տը Սալլօ , Փարիզու խորհրդարանի ան-
դամ , շատ հմուտ գիտնական մարդ մը :
Վաթսուն տարի շարունակութեամբ իւր ըն-
դարձակ ծրագրին համեմատ . 1724 տարին
սկսեալ ամիսն անգամ մը կը հրատարակուէր
փոխանակ շաբաթը անգամ մը հրատարակ-
ուելու . այս կերպով խմբագիրը մտածեցին
աւելի լուրջ հանդէս մ'ընել եւ կարեւո-
րութիւնն աւելցունելը Այդ թերթն անխնա-

յաբար եւ անաշուապէս կը դատէր ամէն հեղինակ, ամէն գիրք. մինչեւ այն ատեն լը-րագրական ազդեցութենէ անկախ հեղինակներ սրտմտիլ սկսան այս նորօրինակ դատաւորին վճիռներէն, ոյց ենթակայ էին հաւասարապէս թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր. նոր շրջանին մէջ յաջող բաղդ մը կ'սպասէր հանդէսին եթէ ահաւոր թշնամի մը չկանգնէր իւր դէմ. ժէզուիթները չհանդուրժեցին գրական եւ իմաստասիրական այդպիսի ատեանի մը ինչպէս էր Սալլոի թերթը. Պապին նուիրակը ձեռք առին եւ զայն դադրեցունել տուին. Գօլպէրի պաշտպանութիւնը բաւական չհղաւ արգիլել անոր խափանումը. բայց մեծանուն պաշտօնեայն հասկընալով թէ ո՞րքան լաւ կրնար ծառայել այս հանդէսը գրականութեան զարգացման՝ 1686ի սկիզբները նորէն հրատարակել տուաւ զայն Կալլօս արքային ձեռքով. 48 տարի ետքը «Ժուռնալ տէ Սալման» պետութեան ինչքը եղաւ եւ հրատարակութիւնը յանձնուեցաւ խմբագրական ժողովի մը. ասոր անդամները հեղինակութիւններ էին. մէն մի նիւթ բաժնեցին ճիւղերու եւ մէն մի ճիւղ ունեցաւ իւր յատուկ խմբագիրը. ժողովը շաբաթը մէկ կամ երկու անգամ նիստ կ'ունենար եւ մէն մի նիստ՝ իւր ատենագրութիւնները:

Հազիւ սկսեր էր հրատարակուիլ եւ ահա ամէն երկրի մէջ թարգմանութիւնները տեսնուեցան Ժուռնալի. Լօնտայի «Արքունական ընկերութիւնը» անոր ծրագրին վրայ հրատարակեց իւր Philosophical Transaction գիտական հանդէսը. եւ ժէզարը չըրացած գիտական թերթեր, հանդէսներ կը հիմնուէին Վենետիկ, Ֆիորէնձա, Փարիս, Մօտենա, Լայպցիկ եւ ի Հօլանտա: Գրական շարժումը եւ նախանձայնողութիւնը սաստկանալով կը ծաւալէր չէ թէ մի ազգէ միւսոյն անցնելով՝ այլ գիտութենէ ի գիտութիւն. բնագէտք, տարրաբանք ուրոյն թերթեր հրատարակեցին, իրաւագիտութիւնը եւ բժշկութիւնը իրենց օրագիրներն ունեցան. մինչեւ իսկ տարփական լրերը քաղաքական եւ կրօնական լրերերու խառնը-ւեցան յատուկ թերթերու մէջ:

*
* *

Գրելը կարծես մենաշնորհ մ'էր այն պահուն. Կալէթ՝ քաղաքական եւ արուեստագիտութեան վերաբերեալ լրերերու մենավաճառն ունէր, Ժոսէֆ Քէ Սալման՝ գիտական եւ գրական նիւթերու, Մեռքէր խառն յօդուածներու: Բայց մենաշնորհեալ թերթերը երկար ատեն չկրցին դիմագրել մրցման ոգւոյն եւ ուրիշ թերթեր ալ երեւցան որոց մէջ զուարճալիս էր Lunes du Cousin Jacques թերթիլը, արծակախառն ոտանաւոր, իւր անսովոր ձեւովը, օրինակի համար գլխավայր տառեր, շրջաւած տողեր, երբեմն սլարապ էջեր: Պէֆուօ տը Ռէնէի՝ խմբագիրը՝ շնորհաւորութիւններու հետ դժգոհ չէր ըլլար ստանալով շիւ մը «չամբանեայ», չապիկ մը, զգեստ մը եւ. գործածութեանը հարկաւոր իրեր եւ նիւթեր կը փոխանակէր իւր թերթին հետ:

Մինչեւ այն ատեն Ֆրանսացիք ամենօրեայ թերթ չունէին. Անգլիացիք ունէին 1702 էն ի վեր իրենց ամենօրեայ Daily Courantը. 78 տարի վերջը երեւցաւ Journal de Paris. յայտագիրը երկու ամիս առաջ ցրուելով մեծ տպաւորութիւն ըրաւ մտքերու վրայ. խոստացուած նիւթերու առատութիւնը եւ զանազանութիւնը անհաւատալի երեւցաւ, բայց հիմնադիրք իրենց վստահութիւնը գիտցան ներշնչել նաեւ հաւարակութեան. արտաքին ցոյցերն ալ անօգուտ չեղան. Փարիզի ամենէն հարուստ թաղերէն միոյն մէջ գրասենեակներ վարձեցին եւ խնամով զարդարեցին. ամենօրեայ թերթ մը բաղդ մ'էր հետաքրքիրներու համար, բայց նաեւ սպառնալիք մը սոնքացող լրագիրներու եւ փոքրիկ թերթերու. ուստի գոռում գոչում մ'էր բրդաւ նոր լրագրին դէմ, բայց եւ այնպէս 1777 յունվար 1ին առաջին անգամ երեւցաւ «Ժուռնալ տը Բարի»: Ոչ միայն իրենց խոստումը պահած եղան հրատարակիչները, այլ նաեւ իրենց խոստացածին կրկին չափով թերթ հրատարակեցին. այդ ձեւովն իսկ Ժոսէֆ Քէ այժմու լրագրաց մէկ սիւնակին մէջ կարելի էր ամօրեալ ուրով կը հասկըցուի թէ մեծ բան մը չէր եւ նշանաւոր ալ բան մը չէր եղեր առաջին թուոյն պարունակութիւնը: Վօլթէնի մի նամակը բաւական քաջալերած էր խմբագիրները, որոցմէ մին ալ դեղագործ ըլլալով լրագիրը շատ մը քաջ-

կըռտուքներու ենթակայ կ'ըլլար, բայց խոսքադիրք պաշարեամբ կ'ընդունէին այսպէս կատակները որք օրագրին յաջողութեանը մանաւանդ կը նպաստէին :

Այլ ուստեք «Կաղէթ տը Ֆրանս» ծանր մտահոգութիւններ կը պատճառէր «Ժուռնալ» խմբագիրներուն . հանապազօրեայ եւ ժողովրդական թերթ մը որ տարին 100 հազար ֆրանք կը շահէր, չէր կրնար նախանձու առարկայ չըլլալ . քանիցս հակառակորդը յաջողեցան դադարեցունել տալ զայն , բայց չկրցան չորթել իւր արտօնատէրանց ձեռքէն :

Այնքան կը պատասխանէր ամենօրեայ թերթ մը Ֆրանսացւոց քմացը , փարիզեան կենցաղոյն , որ նախաճաշի պահուն չօրջալի եւ սուրճի հետ ամէն մարդու առջեւ «Ժուռնալ» մը կար . ոչ ոք կրնայ զանց ընել զայն եւ ամէն մարդ սկսած էր դարմանալ թէ ինչպէս կրցած էր մինչեւ այն ատեն ապրիլ առանց ամենօրեայ լրագրի :

* * *

Ֆրանսայի մէջ վաղիւ մտած եւ ընդունելութիւն գտած էին օտար թերթեր : Ֆրանսացի հրատարակիչները Ունոտօէն ըսկըսեալ գանգատած էին այս բանին դէմ : Շօշմտայէն Ֆրանսա ներածեալ թերթերը ամէնէն շատ եղան եւ ամէնէն աւելի Ֆրանսայի վրայ կը խօսէին : Շօշմտական քիչ շատ կարեւոր քաղաք մը Ֆրանսերէն թերթ մը կ'ունենար . այս տեսնելով բազմաթիւ զրգուէրներ անցան այդ երկրը եւ ուրիշ երկիրներ , նորանոր օրագիրներ հիմնեցին եւ վճարելով տարեկան մի տուրք , կ'ստանային իրաւունք ներածութեան ի Ֆրանսա : Սահմանադրին վրայ լուրերու կատարեալ գործարաններ հաստատուեցան : Թուրքի Բիէն Ռուսօ անուն մարդ մը Փարիզ գնացած էր բազմ շինելու . հոն մի քանի թատերական խաղեր յաջողեցնելէն ետքը անցաւ Լիէժ եւ հոն հիմնեց Journal encyclopédique, (1756-1793-288 հատոր) : Վօլթէն այս թերթին համար ըսած է թէ Եւրոպա հրատարակուած 173 օրագիրներուն առաջինն էր , եւ շատ ակործեցաւ այնպիսի հրատարակութեան մը որ իրեն ալ պիտի ծառայէր , գրքերուն ծանուցումները տըպելով եւ իւր դրուատը ընելով : Բայց իմաստասիրական թերթի մը ներկայութիւնը

հաճելի չէր Լիէժի կղերականաց . ուստի Բ . Ռուսօ պարտաւորեցաւ փոխադրուիլ Պրիւսէլ . հոն ալ միայն երկու երեք ամիս կրցաւ հրատարակուիլ , զի արդելք եղան իրեն պատական ազդեցութիւնը . անցաւ Պուլեօն եւ հիմնեց հոն կարեւոր ընկերութիւն մը Société Typographique de Bruxelles, որչափ պատուաբեր այնքան չահաբեր այդ քաղքին . այս ընկերութեան տպարանէն դուրս եկան ոչ միայն «Ժուռնալ Անսիքլօքէ-տիք»ը , այլ նաեւ Journal de jurisprudence, Gazette salubre, գրագատական թերթ որ գերմաներէն , անգլիերէն , ֆրանսերէն լաւագոյն գրքերէն հատուածներ կը քաղէր իբրեւ ծանօթութիւն այդ հրատարակութեանց վրայ եւ բժշկութեան ու գիտութեան զարգացումը , նոր գիւտերը կը նշանակէր . նմանապէս հրատարակուեցաւ La Gazette des Gazettes քաղաքական օրագիրը որ աւելի ծանօթ էր Journal de Bruxelles անուամբ եւ 30 տարի մեծ համբաւ ունեցաւ :

Ռուսօ որ միջակ հեղինակ մ'էր , կ'երեւի որ շատ յարգ եւ հարստութիւն ստացաւ . այն ատեն գրուած նամակէ մը կը հասկըցուի որ տանը մէջ վաթսուն հոգւոյ փոքրիկ հանրապետութեան գլուխն անցած կը դուրսէր . բնակարան , սնունդ , խնամք , վարկ , բոլորը ինք կը հայթայթէր . կինը , զակները իւր հետ կ'աշխատէին . խմբագրութիւն , տըպագրութիւն , կազմարարութիւն ամէն բան իւր տան մէջ կը կատարուէր , եւ տարին 20 հազար ֆրանք զուտ շահ կը մնար իրեն : 1781ին Փարիզ կը բնակէր Ռուսօ , փառաւոր տան մը մէջ , եւ իւր ժամանակակից անուանի մարդիկը ստէպ կը հրաւիրէր իւր սեղանը , ինչպէս Պառթէլի , Շարլ , բնագէտ , Ռէյնալ , տ'Ալանսէն , Մաւմօնթէլ , Լըմիէն , Թումա , Տօրա , Ֆալաու եւ : Ասկէ զատ Ռուսօ շարունակ Վօլթէնի հետ կը թղթակցէր եւ այս ամէն յարաբերութիւնը գիրք մը կուտային իրեն լրագրապետաց դասուն մէջ : Իւր գլխաւոր ոտխն էր եղած Բանքուք , «Մէնքիւր» ի խմբագիրը զոր արդէն յիշեցինք , եւ զոր Ռուսօի գալիսները չէին թողուր որ քնանայ . «Մէնքիւր» ի յաջողութիւնը չէր յազեցնէր Բանքուքի փառասիրութիւնն , ուստի ուզեց որ «Ժուռնալ տը Պուլյօն» կործանի . այս գիտաւորութեամբ հիմնեց նոր թերթ մ'ալ ,

Journal historique, որ բառական յաջողեցաւ բայց առանց մնաս բերելու միւսին: Տեսնելով որ նպատակին հասաւ Avant-Coureur անունով թերթն ալ գնեց եւ տեղը դրաւ Gazette de littérature, յետոյ գնեց նաեւ Journal de politique և յետոյ երկուքն ի մի Journal politique et de littérature անունաներքեւ: Տասն հազար ֆրանք թոշակաւ խմբագրապետ կարգեց Լէնկէ փաստաբանը որ քանի տարիներէ ի վեր Գաղղիոյ մէջ բառական աղմուկ կը յարուցանէր: Չը մոռնանք յիշել Մանրալուրերը, Bulletin, որոց գլխաւոր գործարանն էր տիկին Տուպլէ տը Բէրգանի սրահը, ուր կը գումարէին գրական մարդիկ: Շուրջ կէս դարու միջոց այդ սրահը մեծ հռչակ հանեց, լուրերու մեծ ուշադրութիւն կ'ընէին եւ յատուկ տետրակի մը մէջ կ'արձանագրէին. ամէն այցելու լրաթերթը կը կարդար եւ իւր գիտցածը կ'աւելցունէր տետրակին մէջ. յետոյ սպասաւորները կ'օրինակէին զանոնք եւ հասարակութեան ցրուելով իրենց եկամուտ մը կ'ապահովէին: «Մէմօռ տը Պաշոմօն»ները ասոնց արտատիպ օրինակներն են: Նոյն ժամանակի ամենէն զբօսեցուցիչ լուրերը այդ ձեւագիր «Մանրալրոց» մէջ պէտք է փնտրուէ:

Յառաջագոյն լրագրոց գիրքը շատ փոքր էր. նախ չաբաթը մի անգամ, քիչ մը ետքը երկու կամ երեք անգամ կը հրատարակուէին: Հանդէսները ամսօրեայ էին եւ դուն ուրեք կիսամեայ. գրական օրագիրներն ալ նախ այնպէս էին, յետոյ չաբաթական եղան: Պայմանները կը տարբերէին պարբերականութեան, կարեւորութեան եւ գիրքին համեմատ. ամենէն կարեւորները Փարիզի համար 18-24 եւ գաւառաց համար 24-32 ֆրանք: Լրագիրները փողոցներու մէջ կը ծախուէին ինչպէս այժմ: Աղբատ կանայք կը գնէին եւ վարձու կուտային. թղթատարութեան գրասենեակները չգիտցուիր թէ ինչպէս կը ցրուէին գաւառի բաժանորդաց. միայն 24 ֆրանքի թերթը 40 ի վաճառելով չհաւոր գործ մ'ընողներ ալ եղած են. այն ատեններն ալ ինչպէս մեր օրերը սրճարաններու մէջ լրագիրներ կային, երբեմն ալ խանութներու մէջ. միայն ԺԸ դարու մէջերը բացուեցան ընթերցարանները:

Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՎԻՔԹՈՐ ՀԻԿՈ

(Շաբ. և վերջ)

Գ.

Վիքթոր Հիկոյի վերջին տարիները գրականութեան պատմութեան մէջ անդուգական տեսարան մը կը ներկայեն: Աքսորանաց վեհաշուք մեծութիւնը վերջնապէս ազատ կացուցած էր զայն ըննադատութեան սլաքներէն: Ինչպէս շատ անգամ կրկնած են, կենդանւոյն մտած էր անմահութեան մէջ: Իւր գրական տիրապետութիւնը կը տարածուէր չէ թէ միայն Ֆրանսայի, եւ նաեւ համայն աշխարհի վրայ: Իւր ասպնջական սրահն, որ բաց էր ամենուն առջեւ, անցած են Ֆրանսայի ամեն համբաւաւոր անձերն եւ Փարիզ այցելող ամեն հոյակապ օտարագիրներն: Բաց աստի, անընդհատ թղթակցութեան մէջ կը գտնուէր աշխարհիս ամեն կողմանց հետ: Ամեն կողմէ, նամակներ, ուղերձներ, ի պատիւ իրեն յօրինեալ բանաստեղծութիւններ, և, կը տեղային իւր չորս դին: Տասն երկու տարիէ ի վեր, պատուոյ նախագահ եղած էր գրական ամեն ժողովներու և քաղաքական ու գիտական բազմաթիւ ակումբներու, եւ անհնար է աստ անուանել այն ամեն ընկերութիւններն որք պատիւ համարած են իրենց՝ Հիկոյի անունը դնել իրենց անդամոց ցանկին գլուխը: Իւր անունը տըռած էին այն ծառուղւոյն ուր կը բնակէր եւ ուր մեռաւ: Իւր ծննդեան ութսուներորդ տարեդարձը ճշմարիտ աստուածացում մ'եղաւ իրեն համար: Առատութեամբ տեղացող ձիւնին տակ, հինգ հարիւր հազար հոգի այդ օր անցան իւր տան առջեւէն, ամբողջ երկրի մը մեծարանքը տանելով յոտս ծերունւոյն որ պատուհանին առջեւ նստած էր, յուզեալ եւ արտասուալի:

Բառական վատառող մանկութենէ մը յետոյ, ինչպէս ինքն իսկ կը հաստատէ այն ուտանաւորաց մէջ զորս յիշեցինք մեր առաջին յօդուածին գլուխը, Վիքթոր Հիկո առողջ կազմութիւն մը ստացած էր. իւր առողջ

ծերութիւնը զարմանք կը պատճառէր իրեն հետ տեսնուողներուն : Իւր սովորութիւններն յոյժ կանոնաւոր էին, եւ արտօրանաց միջոցին, ի կէրնըսէ, Հոթմիլ - Հառգի պատերուն վրայ կարելի էր գտնել սա արձանագրութիւնը զոր ինք իւր ձեռքը գրած էր .

Յառնել վեցին, ճաշել տասին,
Ընթել վեցին, ննջել տասին,
Կ'ապրեցնէ մարդս տասն անգամ տասն :

Ոտքի վրայ կ'աշխատէր միշտ եւ շատ անգամ իւր սենեկին բոլոր պատուհանները բաց, օդին բարեխառնութիւնը որքան ալ խիստ լինէր : Իւր Նոթ - Գոթ Փաթի վէպը գրած է ձմրան խստաշունչ եղանակին, դըրեթէ բաց օդին : Յայնմ հետէ, պատմած է թէ այդ վէպը գրած միջոցին, յաճախ սքանչացում կ'առնէր իւր բարեկամաց իւր տեսողութեան զօրութեամբ : Վերջապիտին, անոնց հետ կ'ենէր աշտարակաց բարձունքն, եւ անտի կը ճանչէր գճարլ Նոտիէ եւ իւր այցելուներն՝ Զինանոցի Մատենադարանին պատշգամբ :

Իւր վերջին օրերուն մէջ մանաւանդ ուշիւ կարծել կուտար թէ մահը այնքան մօտ էր Մեծ Բանաստեղծին : Բժիշկներ, որք զինքն քննած էին, յայտարարած էին թէ իւր գործարանները քառասուն տարեկան մարդու մը գործարանաց առաջ կազմութիւնն ունէին : Արդարեւ երիտասարդի մ'առուգութիւնն ունէր այդ ութսունամեայ ծերունին : Սակայն, դժբաղդ արար, Հիւսիս քնաւ հոգ չէր տաներ իւր առողջութեան : Ամառ թէ ձմեռ, կրկնոց չէր հազներ : Շատ անգամներ երկար պտույտներ կ'ընէր հետիտան : Հանրակառքին մէջ, միշտ վերնայարկը կը նստէր, աղքատ գործաւորաց մէջտեղ որոց վիշտերն երգած է այնքան : Պ. Լէսէբսի ընդունելութեան օրն ալ, Ֆրանսական Ակադեմիոյ սրահին մէջ, Հիւսիս մինչեւ վերջը գլխաբաց մնացած էր, հակառակ տիրող սաստիկ ցուրտին : Եւ այդ տեղ է որ ստացաւ իւր հիւանդութեան առաջին սերմերն : Հիւանդութիւնը երթալով սաստկացաւ ու թորատապի դարձաւ : Եւ մայիս 22ին, ուրբաթ օր, Մեծ Բանաստեղծը մեռաւ իրեններուն մէջտեղ, մահուամբ մտնելով անմահութեան մէջ, ոյր երախայրիքը ճանչցած էր կենդանւոյն :

Յուզարկաւորութիւնը տեղի ունեցաւ

յունիս 1ին : Այսպիսի տեսած չէր հանդէս մը աւելի վեհաշուք, զարմանահրաշ, մեծափառ : Ժողովուրդը մը ողջոյն տարաւ զՎիքթոր Հիւսիս յայն տաճարն ուր պիտի հանգչին իւր ոսկերոտիք : Ֆրանսան ողջոյն իւր վերջին մեծարանքը դնաց ընծայել այն մարդուն, որոյ փառաց ցոլը այնքան ընդերկար լուսաւորած էր զայն : Իրաւ է թէ յուզարկաւորութիւնը չունէր կսկծազին սըգոյ մը տխուր ու մահահամբոյր տեսարանը : Այլ Վիքթոր Հիւսիս կ'երթար կեանքէն ու փառքէն յղիացած, բեղուն կենսավարութենէ մը եւ ի կատար ելած գործէ մը յետոյ : Անհուն ամբոխն որ կ'ընկերանար դադաղին, աւելի կ'ուզէր հոչակել անոր փառքն քան մասնակցիլ նորա մահուան սըգոյն : Իւր յուզարկաւորութիւնն աւելի աստուածացման մը կը նմանէր քան մեռելական հանգէսի մը : Այդ օրն պիտի երեւի Յաջորդ տերունիին իբր անհաւատալի առատապէլ մը : Որքան ալ մարդ փնտռէ իւր մտաց մէջ, չկրնար գտնել անոր նման, եւ ո՞վ գիտէ թէ յաւէտ չպիտի մնայ անդուգական : Արդարեւ շատ քիչ մարդիկ կը ծընին որք կարենան, իրենց մահուան դադաղին շուրջ, հաւաքել երկու միլիոն անձինք, որք ներկայացնեն երկիր մը ողջոյն :

Փարիզի թերթ մը յուզարկաւորութեան նկարագրութիւնն ընելէ յետոյ կը գոչէ . «Նրբէք հսկայ մը իւր դադաղին ետեւ չունեցաւ նմանօրինակ հսկայ մը» :

Եւ այս ամենն, այս ամեն շուքն, այս անհուն ժողովուրդն որ ի գերեզման կ'առաջնորդէ իւր Մեծ Պաշտպանն, այդ ծաղիկներն որք իրենց ծանրութեան ներքեւ կ'ընկձեն մահուան չիբիմն, այդ պերճազգեստ զինուորականներն որոց գէնքերը կը փողփողեն ի լոյս արեգական, այդ ամեն ինչ կը յիշեցնեն Մեծ Բանաստեղծին սա տողն, ուղղեալ ուրիշ մեծ մարդու մը զոր այնքան երգած է իւր երկնային քնարով .

Ո՛հ, գնա՛, շքեղ կերպիւ պիտ' թաղենք քեզ :

Դ.

Համառօտ կերպիւ Վիքթոր Հիւսիսի կեանքը ներկայացնէ յետոյ, կուգանք մի քանի խօսք եւս յաւելուլ գրական մարդուն վրայ :

Վիքթոր Հիւկո մի միայն հանձար մը չեղաւ, այլ բնութեան երեւոյթ մը:

Ի՛նչ հրաշալի ստալաբէզ, այն օրէն ի վեր յորում երեւան կուգայ «վսեմ մանուկը», երիտասարդութեան յար մարտնչող ժամանակամիջոցէն որ արդէն ունի իւր ճանճագեղ փառքին առաջին ցոլումները, մինչեւ արբւնութիւնն, ա՛յնքան բեղմնաւոր եւ ա՛յնքան հրաշազան, մինչեւ քսորն, ծերութեան վեհ շողողումը, մինչեւ այդ համաշխարային սուգը: Բանաստեղծին կեանքը կը լեցնէ գրեթէ ամբողջ դարն, եւ դարուն հոգին կը թրթռայ նորա ամեն գործերուն մէջ: Անոր բոլոր յուզումները կ'զգայ, կ'արտասուէ ամեն թշուառութեանց համար, կ'երգէ անոր ամեն ուրախութիւններն: Շքեղապէս կը ներկայացնէ վայն իւր վարանոտ մտքին հակասութեանց մէջ, իւր խռովուն խղճին յուզմանց մէջ, իւր ներշնչմանց տարտամութեան եւ մեծութեան մէջ:

Այդ երկար կենաց, այդ գործերու դէպին մէջ, ի՛նչ ճոխութիւն, ի՛նչ զանազանութիւն: Չկայ գաղափար մը որ պաշարած չլինի անոր ուղեղը. չկայ զղացում մը որ անցած չլինի իւր սրտէն. չկայ իրողութիւն մը որ գերծ մնացած լինի իւր հոգածութեանէն. չկայ իրականութեան երեւոյթ մը զոր չներկայացնէ. չկայ անտեսանելի անկիւն մը զոր խուզարկած չլինի. չկայ բնութեան մէջ գոյն մը, հոտ մը, աղմուկ մը որ չնշուէ, չբուրէ, չհնչէ իւր տաղերուն մէջ: Իւր գործերը աշխարհ մ'են ուր. կեանքը կը զեղու: Գեղեցկին քով տղեղը, մեծին քով փոքրը, գժուճին քով վսեմն իրար. կը խառնուին իւր գործոց մէջ եւ մեզ կը ներկայացնեն կեանքն ինչպէս որ է:

Այդ հանձարոյն գլխաւոր յատկութիւնն է զօրութիւն: Նիւթին, մտքին եւ կրից անհունութիւնը կը գրաւէ վայն միշտ: Սակայն այդ ամենուն հետ խառնուած է նաեւ խանդադորով սիրտ մը: Նշած չէ միայն եռանդուն սիրող մարդկութեան, արգահատած չէ միայն տառապելոց եւ զրկելոց վրայ, եւ կատարութեամբ յարձակած չէ միշտ չարերուն դէմ: Բարութիւնն, որ իւր բնութեան ճամբիւ հիմն է, կը տեսնուի իւր թէ՛ քաղցրագոյն երգոց եւ թէ՛ վրիժառու աղաղակաց մէջ: Ոչ ոք խօսած է

մանկութեան վրայ որպէս Պարթէիբու հեղինակն: Այն սիրտ միայն, որ այդ քաղցրալուր շեշտերը գտած էր, կրնար արտաբերել ա՛յնքան զայրոյթ եւ արհամարհանք:

Կը կրկնենք, Վիքթոր Հիւկո յոյժ մեծ մարդ մ'եղաւ. մանաւանդ արտակարգ մարդ մ'եղաւ: Էռնէսդ Ուրնան, Ֆրանսացի մեծանուն մատենագիրներէն մին, կը գրէ. «Կարծես ստեղծուեցաւնա Յաւիտենականին մանաւոր հրամանագրովը»: Արդարեւ օրեր պէտք է ուսումնասիրելու համար Հիւկոյի ազդեցութիւնն բանաստեղծութեան եւ ընդհանուր գրականութեան վրայ: Երկու երեք սերունդ առաջնորդած է զարմացումէ ի զարմացում: Ամեն ինչ աեսած, ամեն ինչ հասկցած, ամեն ինչ զգացած է: Երեւակայութեան հետ ունեցած է միշտ նըրբամտութիւն, շատ նըրբամտութիւն: Բաց աստի, իւր գլխաւոր յատկութիւնն է նաեւ ընթերցողին սիրտը շարժել եւ երազներու մէջ տանիլ զայն: Բառեր ունի որք բացատրութիւն կուտան ամենէն անմեկնելի, անսահման բաներու: Եւ այդ մարտիկն, այդ յեղափոխականն, հոգի մ'ունի որ միշտ կ'արւնի: Մեղամաղձութեան զգացումն ունի նա որ կը գոչէ.

Ո՛վ արեգք անհետացեալք հորիզոնին ետեւէն:

Մեր ճակատագրին խորհուրդներով պաշարեալ էր. նա որ վսեմ տողի մը մէջ կը հարցնէր.

Ո՛ւր կ'երթայ, Տեր, ո՛ւր կ'երթայ երկին յերկինս:

Եւ սակայն ամբողջովին հաւաքած չենք լինիր այն ճաճանչներն որոցմով ժողովրդական գործը կը սիրէր պսակ մը կազմել բանաստեղծին շուրջը, եթէ տաղանդին մեծութեան եւ գործին զօրութեանց չմիացնենք վեհանձն գաղափարները եւ անձնական բարեմասնութիւնները, հայրենասիրութիւնը, մարդասիրութիւնը, հաւատը: Այո՛, հաւատը: Վիքթոր Հիւկո լաւատես էր, այսինքն հաւատացող. վստահութիւն ունէր մարդկային բնութեան, ընկերութեան եւ իւր ասպաղային վրայ: Փառքը երբէք չպիտի երթայ սկիպտիկեաններուն. ժողովուրդը վանոնք միայն կը սիրէ որք կը բաժնեն անասուգութիւններն և պատրանքներն որոցմով կ'ապրի:

Մանաւանդ մեծ մարդասէր մ'եղաւ

Հիւկօ : Իւր գործերուն մէջ, խորհրդարանի բեմին վրայէն, ամենուրեք մարտնչած է մահու պատժոյն դէմ : Քաղաքական բազմաթիւ դատապարտեալներ միթէ իրենց կեանքը չե՞ն պարտիր Մեծ Բանաստեղծին : Յիշենք միայն սա դէպքը : Լուի Ֆիլիպի թագաւորութեան օրով, Պարսէս մահուան կը դատապարտուի : Գլխատման նախորդ գիշերը, Հիւկօ միայնակ կ'երթայ արքայական պալատն եւ հետեւեալ ոտանաւորը կ'ուղղէ Լուի Ֆիլիպի, որ կորուսած էր իւր աղջիկն եւ որուն թու մը ծնած էր .

Յանուն հրեշտակին, աղաւնւոյ մը պէս թռած,
Յանուն արքայազնին, եղէգ քաղցրիկ և ազազուն,
Շնորհ յանուն օրանի մը,
Շնորհ յանուն տապանի մը :

Եւ Լուի Ֆիլիպի գրով պատասխանեց իւր անկողնէն .

— Կուգաք ապացուցանել ինձ թէ քու-
նին մէջ ալ կարելի է բարութիւն ընել :
Լ. Բ.

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԾԱՂԿԻ ԵՒ ՊՏՂՈՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

ՆԻՒ-ԵՈՐՔ 29 մայիս,

Դժուար է ճշդիւ որոշել արական եւ իգական սեռերու յատուկ գործերն եւ պաշտօններն աշխարհի մէջ. դիւրին չէ նաեւ որոշ կերպով հաստատել թէ ի՞նչ եղած է կանանց ազգին ազդեցութիւնը քաղաքակրթութեան վրայ աշխարհի պատմութեան այլ եւ այլ ժամանակներու եւ երեւոյթներու մէջ : Սա յայտնի է սակայն թէ կանանց ազգը սիրոյ, գիտնէ եւ գործոյ կողմանէ ընդհանրապէս դերազանց եղած է քան արանց ազգն, եւ ի սկզբանէ անտի կանանց բարի մասն ու բաժինն եղած է հիւանդներու եւ անկարներու հոգ տանիլ, սղացեալներ մխիթարել եւ հաւատոյ ու յուսոյ հրեշտակներ ըլլալ այնպիսի տեղեր իսկ ուր հաւատալու եւ յուսալու չատ փառ եւ պատճառ չերեւիր : Հնագոյն ժամանակներէ մինչեւ այսօր Սէր, Խաղաղութիւն, Ազատութիւն, Գութ եւ ուրիշ շատ առաքինութիւններ կ'եննէր կնոջ կերպարանօք նկարուած են, եւ իրերէ կին աւելի գեղեցիկ եւ աւելի հաճելի երեւցած են : Արդարեւ եթէ կինն ինկած եւ նուաստացած չէ, կամ լաւ եւս է ըսել, կնութենէ ելած չէ տգիտութեան, բռնութեան, աղքատութեան եւ գէշ միջավայրի մ'ապականիչ ազդեցութեան ենթարկուելով, է մայր եւ ծնող ամենայնի զոր մարդիկ կը կոչեն քեզեցի, աշխարհ եւ քաղաք : Կնոջ սիրտն է սիրոյ եւ գիտնէ անպառաքաւոր, եւ այժմու քաղաքակրթութեան անուշահոտ ծաղիկներէն շատերը թերեւս չը բացուած պիտի խամրէին եթէ այդ աղբիւրէն չուղեւէին : Հոս Ամերիկայի մէջ, ուր դժբախտաբար Գորգոններ ալ շատ կան, բարի կիներ կը փայլին ճշմարիտ կնոջ գեղով, շնորհօք եւ ազնուութեամբ : Չկայ մարդասիրական եւ քրիստոնէական գործ որուն մէջ մեծ բաժին չունենան կանայք : Ինչպէս ամէն ամերիկայի այր կը խորհի եւ կ'աշխատի դիտութեան եւ արուեստի մէջ նոր գիւտ մը հընարել, նոյնպէս եւ կան կիներ եւ մանկամարդ օրիորդներ որ կարծես թէ միշտ միտք կը յողնեցունեն բարիք ընելու նոր կերպ մը կամ միջոց մը գտնելու :

Կանանց բարեսիրական բազմաթիւ գործերէն փոքրագոյն բայց փափկագոյն մէկ գործին վրայ գրել կ'ուզեմ այս անգամ, փափագելով եւ յուսալով որ փափկասիրտ հայ տիկիներ եւ օրիորդներ բարի օրինակ տեսնեն թեթեւ զոհողութեամբ հարիւրաւոր տրտմեալներ ուրախացունելու, եւ անոնց ուրախութեան եւ մխիթարութեան մէջ ազնիւ հաճոյք եւ երջանկութիւն գտնելու :

Յօդուածիս վերնագիրը թերեւս առաջին անգամ է որ կը տեսնուի հայ թերթի մը մէջ եւ անհասկնալի է հայ ընթերցողներու : Ուստի պարզեմ նախ թէ ի՞նչ է Ծաղիկ եւ Պտղոյ Առաքելութիւն կոչուած գործը : Հիմա Ամերիկայի, ինչպէս եւ Անգլիոյ, մեծ քաղաքներու մէջ կան կանանց եւ օրիորդաց ընկերութիւններ որոց միակ նպատակն է այցելել հիւանդանոցներ, աղքատանոցներ, անկեղանոցներ, աղքատ աղջկանց գործարաններ եւ աղքատներու թաղեր եւ ծաղիկ ու պտուղ բաշխելով մխիթարել եւ ուրախացունել

այնպիսիներ որ մարմնոյ եւ սրտի վիշտերով կը տառապին եւ կամ ազգատութեան պատճառաւ կը դռնուին այնպիսի դիրքի եւ վիճակի մէջ որ բնութեան ածան բաց ազնիւ եւ ազնուացողիչ պարգեւները, ծաղիկ եւ պտուղ, վայելելու շատ դիւրութիւն չունին: Այս գործը ծագում առած է ազնիւ օրիորդի վեհանձնական ճշխորհուրդէն: Ոչ միայն ակտերն, այլ եւ բարի խորհուրդներն եւ գործերը տարափոխիկ են, եւ շուտ կը տարածուին ամէն կողմ: Օրիորդ մը, որ ճշմարիտ կնոջ սիրտունէր, ցաւելով կը խորհէր միշտ թէ անկարող էր ինք օգնելու անոնց որ օգնութեան շատ պէտք ունէին: Բայց այս օրհնեալ խորհուրդը բաւական էր ցուցնելու անոր ճամբայ որով կրնար ընել գործ մը որ պիտի տանէր զուարթութիւն, յոյս եւ հաճելի խորհուրդներ հիւանդաց, աղքատաց եւ երկար ժամերու տաժանելի աշխատութեամբ վատակեալ եւ բեռնաւորեալ դժբախտ ոգիներու:

1868ին ամրան պայծառ օր մ'էր որ այս վեհ խորհուրդն եկաւ օրիորդ Հէլէն Թինքամ անուն Պոսդոնցի ազնիւ օրիորդին միտքը:

Օրիորդը գիւղէ մը Պոսդոն դարձած էր, եւ երկաթուղոյ կայարանի մը մօտ կ'սպասէր որ խուռն բազմութիւնն անցնէր: Օրիորդ Թինքամ իւր ձեռքն ունէր մեծ փունջ մը ծաղկանց զորս քաղած էր գիւղին պարտեզներէն, պուրակներէ եւ դաշտերէ: Անձկակարօտ աշուրներ յառած էին օրիորդին ծաղիկներուն, եւ մանկական ձայներ կը մրմնջէին. «Ո՛հ, օրիորդ, միայն մէկ հատ հաճէիք տալ ինձ»: Մանկանց աղերսը մերժել կարելի չէր, եւ շուտով ծաղկանց ամբողջ փունջը բաժնուեցաւ: Ամէն անգամ որ օրիորդը քաղաք դար, ծաղիկներ կը բերէր եւ այս կերպով կը բաժնէր, եւ ծաղկասէր մանկանց խումբն երթալով կ'ստուարանար ցորչափ օրիորդին բարեւորութեան եւ վեհանձնութեան համբաւը կը տարածուէր այն կողմերը: Այն ամառը մինչեւ վերջը Օր. Թինքամ յառաջ տարաւ իւր ծաղկի առաքելութիւնն, եւ տեսնելով թէ ամէն անգամ ո՛րչափ հաճութիւն եւ ուրախութիւն կուտար մանկանց, սկսաւ խորհիլ թէ ինչպէս կարելի էր ընդարձակել

գործն եւ յառաջ տանիլ կանոնաւոր կերպով: Այս նիւթին վրայ խօսեցաւ իւր երկու բարեկամաց, եւ իւր խորհուրդը պարզեց անոնց այնպիսի ազդու եւ գողտր կերպով որ անոնք եւս այս բարի գործին մասին անոր խանդն ու եռանդն առին եւ սիրով ընկերացան անոր: Երկար խօսելէ եւ խորհելէ ետքն որոշեցին չաքաթն երկու անգամ տեղ մը ժողովիլ ծաղիկ ընդունելու, փունջ կապելու եւ փունջերն հիւանդանոց տանելով հիւանդաց բաժնելու. նոյն ատեն չմոռցան նաեւ այցելել այն գործարաններն ուր մանկամարդ աղիկներ եւ տարեւոր կիներ շարունակ կ'աշխատին եւ զրուարաւ կը հայթայթէին իրենց օրական պարէնը: Այսպէս որոշելէ ետք հարկ էր ժողովի տեղ մը գտնել: Միադաւան քրիստոնէից մէկ եկեղեցւոյ մատուռը տրուեցաւ անոնց, եւ Առաքելութիւնն սկսաւ նախ 1869, մայիսի 10ին, երբ մանկամարդ օրիորդներ վերոյիշեալ մատուռը ժողովեցան ընդունելու եւ բախելու ծաղիկները զորս զրկել խոստացած էին անոնց բարեկամները: Տասն երեք տեղէ բաւական մեծ քանակութեամբ ծաղիկներ զրկուեցան, եւ օրիորդը այն ծաղիկներէն 75 փունջ կապելով տարին ութ մանր հիւանդանոցներ ու որբանոցներ եւ 55 անհատական սուներ ուր գիտէին թէ հիւանդներ կային: Բաւական ծաղիկ չկար գործարանները տանելու, ուստի գործարաններ այցելել թողուեցաւ ետքի: Առաւօտուն ծաղիկները կարգի դնելու եւ կողովները լեցունելու կ'ընթացէին, եւ յետոյ օրիորդները զոյգ զոյգ կը մեկնէին այս առաքելութեան հաճելի գործը կատարելու, այսինքն ծաղիկները բաշխելու: Ամէն տեղ ուրախութեամբ ընդունուեցան, եւ ի սկզբան անդ օրիորդներն էին քիչ մը ամօքոտ, սակայն հաճոյքը զոր կ'ըզային աւելի մեծ էր քան ամօքոտութիւնն, եւ ամենքն ետ դարձան «արդարեւ յոգնած, սակայն շատ երջանիկ», եւ կ'ըսէին. «Ո՛հ, ի՛նչ սիրուն եւ աղուոր գործ էր զոր կատարեցին»: Ահա այս էր սկզբնաւորութիւնը: Առաջին ամառը միջին հաշուով օրը 121 փունջ բաժնեցին: Անցեալ տարի բաժնուած ծաղկի փունջերուն թիւն էր եօթնպատիկ կամ ութպատիկ աւելի: Օր մը միայն 1700 փունջ եւ շատ մը կողովներ

րով զատ զատ ծաղիկներ բաժնեցին :

Այս փափուկ եւ բարի գործին օգուտն եւ կարեւորութիւնը շատ շուտ տեսնուած եւ քաղաքներու սահմանէն դուրս եւս գործին համակրողներ եղած են : Շատ գիւղերու մէջ կան մասնաճիւղեր որոց անդամներն ամէն չորեքշաբթի ժողովելով ծաղիկները փուռն կը կապեն եւ հինգշաբթի քաղաք կը ղրկեն : Ծաղիկներն անթառամ եւ թարմ պահելու համար եւս հանձարեղ միջոցներ խորհուած են , այնպէս որ բաւական հեռավոր տեղերէ ծաղիկներ կը ղրկուին , եւ են այնպէս որպէս թէ այն ինչ քաղուած են պարտիզէ :

Շատ գիւղերու մէջ դպրոցաց մանկունք կը միանան եւ մեծ քանակութեամբ ծաղիկներ ժողովելով կը ղրկեն քաղաք բաշխելու աղքատ մանկանց որ հաղիւ կը տեսնեն խտրի կանաչ թերթ միայն : Մանր մանկանց եռանդն եւ ոգին շատ գովելի է , եւ կը ցուցնէ թէ գթոյ եւ սիրոյ ոգին ինչպէս տարածուած է . փոքր տղայք անգամ կը սորվին սա քաղցր դասը թէ երանելի է բարիք ընել անոնց որ նուազ բարեբախտ պարագաներու մէջ կը գտնուին : Չկայ աշխարհի մէջ աւելի բարերար գործ քան ուսուցանել մանկանց կանուխ խորհիլ իրենց անձերէն զատ ուրիշներու վրայ եւ սիրոյ ու գթոյ ոգին մշակել անոնց մէջ : Ամէն դարուն եւ ամառ պարտէզներ , դաշտեր եւ հովիտներ կը զարդարուին դալարեօք եւ բիւրազի գեղեցիկ ծաղիկներով : Եթէ մանկանց եւ օրիորդաց ու տիկնանց փափուկ ձեռուքներ այն ծաղիկները խնամով ժողովեն եւ փուռն կապելով հիւանդաց եւ աղքատաց բաժնեն , ինչ մեծ բարիք ըրած կ'ըլլան , եւ ո՛րչափ տրամեալներ կ'ուրախացունեն : Պօլսոյ այլ եւ այլ արուարձաններուն մէջ հայ հարուստներէն շատեր ունին ընդարձակ բուրսատաններ որոց նայելով կը պարարեն իրենց աշուրները եւ կը զուարթացունեն իրենց սրտերը , բայց աւելի երջանկութիւն եւ հաճոյք պիտի չըզգա՞ն արդեօք երբ իրենց բուրսատաններու ծաղիկներէն փուռն ղեն Ս. Փրկչի հիւանդաց եւ աղքատ հիւղերու մէջ ծաղիկ կարօտով հալով մաշող թշուառաց ձեռուքները :

Ուր են մեր փափկասուն օրիորդներն

որ սկսին այսպիսի ազնիւ գործի մը : Ինչ քաղցր եւ հաճելի պիտի ըլլայ տեսնել հայ օրիորդներ որ ծաղիկներով լի սեղաններու շուրջը բոլորած իրենց փափկիկ ձեռուքներով փուռն կը կապեն , եւ ուրիշ օրիորդներ այն փուռններն եւ պտուղներ կողովներ լեցունելով իւրեւ սիրոյ եւ մխիթարութեան հրեշտակներ կ'երթան անոնց ասդին թշուառներ մխիթարելու եւ տրամեալ սիրտեր ուրախացունելու :

Օրիորդ Թինքամ մօտերս Ծաղիկ եւ Պտղոյ Առաքելութեան գործին վրայ խօսելով ըսած է . « Այս գործին վարձատրութիւնն իւր մէջն է : Երբէք այսչափ մեծ երախտագիտութիւն ցուցուած չէ այսչափ փոքր գործի մը համար : Անբացատրելի է երախտագիտութիւնը զոր կը ցուցունեն մեզ ծերեր , հիւանդներ եւ մանկիկներ երբ կը տանին անոնց ծաղիկ : Ասի այնպիսի ողորմութիւն մ'է զոր մարդիկ կըրնան ընդունիլ եւ միանգամայն պահել իրենց արժանապատուութիւնը : Այնպիսեաց ծաղիկներ տանելով կը ցուցունեն թէ կը ճանչնան որ իրենց մէջ կայ նիւթականէն աւելի բարձր բան մը , եւ անոնք կը հասկնան զայս , եւ բարձր ու ազնիւ ըզգացումներով եւ խորհուրդներով կը լեցունին » :

Այս Առաքելութեան օրինակ առնելով Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ շատ տեղեր նմանօրինակ գործի ձեռնարկած են շատեր : Ամերիկայի մէջ Քէմպրիճ , Նիւ Եորք , Շիգակո , Ֆիլատէլֆիա , Մէնդ Լուիս , Պրուքլին , Նիւ Պէտֆորտ , Ինտիանապոլիս , Քուինսի , Մէյլըմ , Նիւ Բորդ , Սինսինատի , եւ ուրիշ վեց կամ եօթը տեղեր , եւ Անգլիոյ մէջ Լոնտոն , Լիվըրքուլ , Էտինպուրկ , Լիտս , Կլասքո , Պրիսթոլ , Պրիմինկամ , եւ նոյն իսկ Ամերիկէի մէջ քանի մը տեղեր կան Ծաղիկ եւ Պտղոյ Առաքելութիւններ : Նիւ Եորքի մէջ բժշկական վարժարաններու մօտ մեծ ճաշարան մը կայ ընդ վարչութեամբ այսպիսի Առաքելութեան մը տիկնանց , եւ ճաշարանի շահի եւ ուրիշ հասոյթներ եւ նուէրներ կը գործածուին Առաքելութեան նպատակին :

Օրիորդի մը ձեռքը գտնուած ծաղկանց փուռնէ մ'առաջ եկած է այսչափ ընդարձակ Առաքելութեան գործ մը մը որ հա-

զարմուռը եւ բիւրաւոր արամեալներու ուրախութիւնն կուտայ :

Երջանիկ կը համարէի զիս եթէ յառաջիկայ տարի բախտ ունենայի վերոյիշեալ Առաքելութեանց ցանկին վրայ աւելցած տեսնել Կ. Պոլսոյ մէջ հայ տիկնանց եւ օրիորդաց Յաղկի եւ Պաղոյ Առաքելութիւն մը : Մեր հայ տիկնանց եւ օրիորդաց սիրտըն ալ է սիրոյ եւ գթոյ աղբիւր . այս աղբիւրը բացուելու է :

ԵԱՆՔԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՄԵՈՒՋԻՆ

Ես աղջիկն եմ որ մըտածէ պանդուխտ .
Կորա նըսեհն հոգալ է իմ սուրբ ուխտը .
Ես աղջիկն եմ որ դուռն ուրեք կը ժպտի
Եւ որ ծեր է հոգով, թէպէտ նորատի :
Ո՛ւր են այնչափ իմ եղբայրներ քաջաբի .
Այսչափ երկար ամիս անցաւ եւ տարի,
Քանի դարուն եկաւ պճնել մեր սարեր .
Հոյլ հոյլ ծաղկեք եւ ճաճանչով լուսահեր,
Քանի՜ ցուրտ ցուրտ ձըմեռ չնջեց հիւսիսի
Եւ մեր սրտին պատեց ձըմեռ ո՛րպիսի .
Ո՛րչափ երկար դէտակն անոնց ճամբային,
Որդեք եւ մարք յուզին նային ու նային,
Եւ դեռ չըկայ դարձի լուր մը կամ նշոյլ .
Ծիծառներն ալ գաղթին այլուր բոյլի բոյլ,
Այլ ամարան տօթադին շունչ արփաթեւ
Յառաջին բոյն վարէ զնոսա հեւ ի հեւ :

Եւ աղջիկն եմ որ մըտածէ իւր քոյրեր
Աստ անդ ցրուած, ծաւի, թուի կամ ոսկեհեր .
Այն իմ քոյրեր ոյց կարօտով անձկայրեաց
Մաշի հայի արտում հոգիս սրգազգեաց :
Ո՛ւր են նորա, ո՞ տայր ինձ թեւ լայնասփիւռ .
Եւ քառաշունչ հեծեալ ի հողմ կամ դեփիւռ,
Փութայի անդր ուր իմ քոյրեր բընակին
Եւ որպէս մայր ր որ պաշտպան է զաւակին,
Լայնածաւալ իմ թեւերով խնամէի
Ձաղքատն անսուրբ հողմն ընդդէմ տմեհի,
Ձորք՝ դայլին դէմ եւ զսիրտարփն ընդդէմ
Ծաղկապատկ պիղծ անդնդոց բալադէմ .
Եւ ասեի նոցա . « Անո՛յշ իմ քոյրեր,
Թե առ ձեր ազգ ճշմարիտ է դոյնով ձեր,
Եթէ իրօք սիրեցիք դուք մեր հէք մայր,
Թող չ'ունենան բընաւ հըրապոյր ձեր համար
Պերճութեանց զարդ, նազանք եւ շուք պճնասեր,
Այլ ժրագլուխ եղէք եւ զգօն, ո՞վ կայսեր .
Տարեք վշտաց . խոհեմ եղէք, երբ դոհ էք :

Ձեր պատիւը թեթեւութեանց մի՛ դոհէք .
Ձի ուր մի ազգ ամբողջ ունի մեծ վշտեր,
Կեներ պարտին լինիլ լուրջ եւ ծնգասեր :

Եւ աղջիկն եմ որ խոկայ դեռ բազում ինչ,
Ոյր արծուանման եւ հեռատես նայուած ջինջ
Մերթ պատահի յուսածիծաղ աւտօի,
Մերթ արտմազգեաց պատկերներով աղօտի :
Այո, յայնժամ, երբ դառնութեան խորհուրդներ
Չարաշըշուկ խմբով զիս շուրջ են պատեր,
Գործ ի ձեռին առնում, եւ մինչ մատուցեք ժիւր
Ոտանուն, խաղան վերայ գործոյս անձանձիւր,
Ես, երազուն, խոկամ զանցեալ ժամանակ
Եւ յիս զարթուն բիւրապատկեր յիշատակ .
Մերթ ծիծաղոտ, մերթ բուռն եւ վէս տեսիլներ
Թափառայած հոգւոյս կարդան հըրաւեր :
Պէս պէս վիճակք մեր մարդկութեան երեւին
Ինձ հետզհետէ, նըկարներով խմբովին :
Տեք մանկութեան, այն առաւօտ վարդադոյն,
Ոսկեդարն այն արդար եւ սուրբ մեր հոգւոյն .
Ապա ասարտամ համակրութեանց այն հասակ,
Ուր մի հրեշտակ խնդրենք ձօնել մի պըսակ,
Ուր երազներ անկարելի թըռչըտին
Վարդապայծառ, հոգեզըւարձ, մեր յորդին,
Եւ սպա բուռն այն կիրքերու եղանակ,
Փառաց անձկով փրշազարդիկ ժամանակ,
Յորում ոմանք ա՛յնչափ անկին երկրաքարշ,
Յորում ոմանք ա՛յնչափ տանջեն աղեխարշ .
Եւ սպա վերջն ամեն բանի, մութ շիրիմ,
Կենաց ծովուն մէջ դրուած խռթ սխերիմ :

Ասեմ ինձ թէ գեղեցիկ եմ եւ շքեղ,
Եւ թէ քիչեր կան ինձ նման աչաքեղ .
Ասեմ ինձ թէ մի նայուածն իմ աչերուն
Կարէ բիւրեր անել գերի իմ սիրոյն,
Թե նըբաւարտ է իմ հասակ գեղանի
Եւ թէ շըրթանցըս քաղցրութիւն չափ չունի .
Ասեմ ինձ թէ աղանւոյ մի նըմանիմ,
Թե անպատում շնորհներ ունի բերան իմ,
Թե ուր ուրեք եւ երթամ ինձ հետ քարշեմ
Մի մթնոլորտ որ անոյշ է եւ վըսեմ .
Դեռ ի՞նչ գիտնամ, հազար բաներ . թէ վարք իմ
Չամեն աշխարհ անեն ինձ սերտ մըտերիմ .
Թե տատարկի նըման քայլեմ, թէ ճակատս
Ամբռնութեան մի խորան է լուսակալ . . .
Ի՞նչ փոյթ է ինձ այս ամենայն, երբ պանդուխտ
Եմ իմ եղբարք եւ իմ քոյրեր յորոց թուղթ
Հաղիւ տարին ընդունիմ ես մի անգամ,
Եւ երբ բազումք են հէք, թշուառ, անխնամ,
Ի՞նչ փոյթ է ինձ այս ամենայն, պանդուխտը,
Կորա նըսեհն հոգալ է իմ սուրբ ուխտը .
Ես աղջիկն եմ որ դուռն ուրեք կը ժպտի :
Եւ որ ծեր է հոգով, թէպէտ նորատի :

Յ. ՍԵԹԵԱՆ

ՆՈՐԱՎԷՊ

ՄԵՌԵԱԼԸ

Անտարքերներու անհատնում գիծը կը հետեւի դադաղի մը, համակ ծածկեալ պըսակներով, կաղնեփայտէ դադաղի մը, սեւցած պողպատէ դրուագներով զարդարուն եւ արծաթագոյն սպիտակ ծածկոյթով մը քողարկեալ, մանկանց եւ կոյսերու ծածկոյթն :

Շուրջը, ութ կամ տաս նորստի ալջիկներ, գլխիկոր եւ երեսնին քօղով մը ծածկուած սոքա մանկական բարեկամուհիներն են անոր որ ոչ եւս է :

Ետին, ընտանիքը . ծերունի հայրը, տարիքէն եւ աշխատութենէ կորաքամակ, գըլխաբաց, աչքը տարտամ կերպիւ յառած կտաւին վրայ որ կը ծածկէ իւր զաւակը, կը քայլէ, առանց գիտնալու թէ ի՛նչ կ'անցնի իւր չորս դին . աշնանային հովը կը փչէ իւր կարմրած աչերուն, մոխրագոյն մազերու քանի մը խոսրոպներ կը ծածանին իւր տըխուր ճակտին վրայ . — իւր քով, սէգ եւ բարձրահասակ երիտասարդի մը կրթնած է ծաղկասառ աղջիկ մը, — քոյրն անոր որ կը ննջէ առ յաւէտ :

Խեղճ աղջիկն մերթ ընդ մերթ ցնցումներ ունի որք ցոյց կուտան իւր վիշտն ու սրտաբեկութիւնը :

Վերջապէս, անտարքերներու անհատնում գիծն որք չոր աչքով կը դիտեն այդ դադաղն համակ ծածկեալ ծաղիկներով ու պսակներով, կաղնեփայտէ դադաղ մը, սեւցած պողպատէ դրուագներով զարդարուն եւ արծաթագոյն սպիտակ ծածկոյթով մը քողարկեալ, մանկանց եւ կոյսերու ծածկոյթն :

* *

Եւ անհատնում գիծը կը մտնէ տաճարին մէջ, փոքրիկ սրահ մը, նսեմատուներ եւ մահահամբոյր :

Ապակիներէն կը տեսնուին քանի մը ոսին ծառեր, որոց դալկահար տերեւները կ'իյնան օրրելով ըստ հաճոյս հովին :

Սրահին խորը, խորանի պէս բան մը, Աստուածաշունչ մը՝ պղնձեայ մեծ Քրիս-

տոսի մ'առջեւ բացուած . աջ կողմը, փոքրիկ երգեհոն մը ոյր առջեւ կը դտնուի բեմն : Անդ է որ երէցը, ձախ ձեռքն Աւետարանին յեցած, կ'սկսի կարդալ նուիրական հատուածներ :

Մեծ աշտանակները կը վառին, տխուր ցոլ մ'արձակելով . դողդոջուն բոցիկներն, տաճարին պարզութիւնը, այդ միօրինակ ձայնը խոր լուսթեան մէջտեղ, մերթ ընդ մերթ երկար հեծկլտանքներով ընդհատեալ, այդ պսակներն որոց մարդարիտները կը ձաճանչեն ի ցոլ մոմերուն, ամեն ինչ կը յուզէ զքեզ :

Աղօթքն աւարտելէ յետոյ, երէցն երկարօրէն կը նկարագրէ կեանքն այնմիկ որ ոչ եւս է, եւ խոր արգահատանաց չեւտով է որ կը գոչէ .

— Յաւիտենակա՛ն, ինչո՞ւ համար իւր սիրողներէն ետ առիւր այս ազազուն արարածն, ոյր սիրտը չճանչեց ո՛չ չարն եւ ո՛չ ատելութիւնը : Յաւիտենակա՛ն, մեզ տուած էիր զնա ետ առիւր զայն մեղքէ թող սուրբ ըլլայ անունդ :

Ապա, երգեհոնը կը մնջէ :

Երէցը կը կարդայ իւր վերջին աղօթքն, եւ յուզարկաւորք կը մեկնին վերստին :

Տակաւ առ տակաւ, ամբոխը կը նուազի, եւ քիչ յետոյ քանի մը ծերունի բարեկամներ միայն կը մնան այդ անտարքեր բազմութենէն :

Ադոնք չեն մեկնիր . — յամբարբար կը հետեւին դադաղին, համակ ծածկեալ ծաղիկներով եւ պսակներով, սեւցած պողպատէ դրուագներով զարդարուն եւ արծաթագոյն սպիտակ ծածկոյթով մը քողարկեալ, մանկանց եւ կոյսերու ծածկոյթն :

* *

Եւ լին խուսիք քաղբին նեղիկի փողոցներուն մէջէն կ'անցնի ոլորտապտոյտ :

Օդին մէջ, հազար աղմուկ կ'ընդհարին, սայլի մը ճարճատիւնները, կառավարի մը հայհոյանքները, մանրավաճառաց ձայները :

Մանուկներ կ'ելնեն խմբովին դպրոցէ մը . յարգանքօք կը բանան գլուխնին դադաղին առջեւ որ կ'անցնի :

Դադաղը կը գլորի գայթ ի գայթ, առողորկ աւալատակին վրայ : Նստարանին վրայ, կառավարը կը մրափէ իւր մեծ կըրկ-

նոցին մէջ, որոյ օձիքներն ականջներուն վը-
րայ դարձած են. երկար ատենէ ի վեր, օ-
տար վշտերու տեսարանն այլ եւս չազդեր
իւր սրտին վրայ:

Երբեմն, գլուխը կը դարձնէ. ականար-
կով մը կը քննէ հետեւողներուն հագուստը
կապուստը եւ թերեւս կ'սկսի ինքնիրեն.

— Օրն սքանչելի պիտի լինի լաճերուս
համար:

Յետոյ կը դիտէ, երազուն, խաչերն եւ
ծառատնկոց փոքրիկ փունջերն ուրք երե-
ւան կուգան ի հեռուստ. քանի մը վայր-
կեան եւս, եւ յուղարկաւորք կանգ պիտի
առնուն:

Փոսի մը շուրջը, խառնի խուռն պիտի
դիզուին ազգականք եւ բարեկամք. երէցը
պիտ' արտասանէ վերջին աղօթքն, եւ ամեն
ոք պիտի մեկնի ականարկ մը նետելով այդ
նոր փորուած հողին վրայ:

Եւ այն ատեն միայն երբ փոսն հարթը-
ուի, ծերունի հայրը, միայնակ տեսնելով
ինքզինք, պիտի կրնայ աղատօրէն թափել
իւր արցունքները. նորատի աղջիկը պիտի
հասկնայ դատարկութիւնն զոր կը պատճա-
ռէ բացակայն:

Վերջապէս, երբ անտարբերներու ամ-
բոխը ցրուի, երբ երեկոցեան ստուերները
մեռելոց դաշտին վրայ գծեն իրենց տարօ-
րինակ պատկերը, երբ հաստաբեւտ դռները
գոցուին, երբ լուսթիւնը, ջինջ գիշերներու
խոր լուսթիւնը, տարածուի անհուն բնու-
թեան վրայ, մինչ ամպերը կը շարունակեն
իրեց խօլ ընթացքն երկնից մէջէն, սըր-
տամոմբոք խօսեցեալը իրաւունք պիտի ու-
նենայ իւր կարգին գալու շիրմին վրայ, եւ
իւր սրտին բոլոր զօրութեամբ գոչելու.

— Ո՛վ Յաւիտենական, դուն զոր հզօրք
կը կոչեն Աստուած արդարութեան, գթու-
թեան, արգահատանաց. դուն զոր տկարք
կ'ողորեն տառապանաց օրերու մէջ. դուն,
որուն կը հաջգի ի ծունր, իմ սպիտակահեր
մահուս ոտից առջեւ... Յաւիտենական,
ցոյց տուր ինձ արդարութիւնդ, գթու-
թիւնդ, արգահատանքդ:

«Աւա՛ղ, ի՞նչ ըրաւ քեզ այս աղջիկն,
այս կոյսն խարտիչ սեղ ուր կը ննջէ առ յա-
ւէտ: Իւր իսպառ շիջած աչերն, յորս կը
ցոլային քու արեգակիդ ոսկեղինիկ ճառա-
գայթները, արհամարհած են վեհութիւնդ
եւ զօրութիւնդ:

«Յաւիտենական, դուն զոր ամեն ոք
կ'զգայ բնութեան մէջ, թռչնիկին երգին մէջ,
ծաղկանց բոյրին մէջ, հովին շունչին մէջ.
դուն, որոյ առջեւ ամեն ոք կը ծնրադէ,
դուն, որոյ կը բարձրանայ աղքատին եւ
լքեալին խոնարհ աղօթքն. դուն որ կ'ըն-
դունիս մանկան առաջին ժպիտը, որբ աղ-
ջըկան առաջին արցունքը, ծերունեաց եւ
մարց վերջին հառաչը... Յաւիտենական,
ցոյց տուր ինձ արդարութիւնդ, գթու-
թիւնդ, արգահատանքդ:

«Այդ աղջիկը. կը սիրէի զայն. կը շա-
րունակուէր այն անուշ երազն զոր միատեղ
կազմած էինք: Ե՛ր ընդհատել զայն: Ե՛ր
խորտակեցիր դիւրաբեկ կոյսն որ կ'օրհնէր
զքեզ իւր սրտին մէջ դրած լինելուդ հա-
մար այնքան գորով եւ այնքան սէր:

«Ո՛վ Յաւիտենական, զի՛ս հարկ էր զար-
նել քու անազօրոյն զայրոյթովդ:

«Եւ եթէ իրօք արդարութեան, գթու-
թեան եւ արգահատանաց Աստուածն ես,
այն Աստուածն որուն ի ծունր աղօթել սով-
րեցուց ինձ իմ մամս, բա՛ց այս գերեզմանը
եւ տո՛ւր ինձ կոյսն զոր կը սիրէի»:

* * *

Հանդստեան դաշտին մէջ, ամեն ինչ կը
ննջէ:

Լուսինն իւր ճառագայթներով կ'արծա-
թէ խաչերը, քարերը, մեռելոց ապաստա-
նին մէջ ցան ու ցիր պսակները:

Քամին կը սարսուացնէ չոր խոտերը. աշ-
նային ծաղիկները օդին մէջ կը բուրեն ի-
րենց տարօրինակ անուշահոտութիւնները.
նոր փորուած հողը կը տարածէ իւր հոտը.
սոխակ մը, ուռենւոյ մը վրայ դարած,
խորհրդաւոր մեղեդի մը կը գեղգեղէ հեշ-
տալուր... Դաշտին մէջ, քանի մը լոյսեր
կը փայլփլին տակաւին...: Ժամացոյց մը
յամբաբար կը հնչեցնէ ժամը հեռաւոր զան-
գատան մը մէջ:

Յօղն իւր փաղփուռ մարդարիտները կը
սփռէ պսակներուն, խոտերուն եւ տերեւ-
ներուն վրայ:

Այսօր որպէս երէկ, արշալոյսը պիտի
ճեղքէ խաւարը, ճաճանջագեղ արեգը պի-
տի լուսաւորէ ամեն ինչ որ է եւ ամեն ինչ
որ ոչ եւս է:

Այլ այս մարդկային հեղհեղին մէջ ուր ամեն կրքեր կը բաղխեն իրարու, ուր հաւատքին քով կը գտնես տարակոյսը, գթութեան քով՝ եսասիրութիւնը, բարեկամութեան քով՝ ատելութիւնը, կայ զգացում մը որ միշտ պիտի ապրի, — Սէրը :

ՕԿԻՒՍԹ ԺՈՐԺԷԼ

ԳԱԻԱՌԱՅ ՎԻՃԱԿԸ

Ե Ո Ջ Ղ Ա Տ

Բ .

(Շար. և վերջ)

Մայիս 14

ՎԻՃԱԿԱՅԻՆՔ . Սոցա մէկ տեղեկագիրը ներփակեալ կը յղեմք, ամենայն խնամք ճշդութեամբ եւ քննութեամբ, արդիւնը մեր 40 աւուր տաժանելի ճանապարհորդութեան :

Այս գիւղերէն կամ աւաններէն ոմանք ունին թաղական խորհուրդ եւ կանոնաւոր վարժարաններ, իսկ ոմանք բնաւ, ոչ զայնս ունին եւ ոչ եկեղեցի եւ թիւ կը տարբերին դրացի այլազգիներէ : Վերջին անառաջնորդ տարիները վիճակայնոց յարաբերութիւնը կը կայանայ միայն գթութեանց եւ այլ կառավարական գործոց կարգադրութեան համար տեղւոյս Ազգային ժողովոյ գիմելու մէջ : — Այս դատերէն շատերը կը բաղկանան Պաշտօնի պատճառաւ տեղի ունեցած գթութիւններէն : Պաշտօն կ'ըսուի այն զգուելի սովորութիւնն, որ է ամուսնանալիք տղուն կողմանէ սակարկութեամբ աղջիկ մ'առնուլ, ճիշդ ինչպէս որ ձի մը կամ եղն մը կ'առնեն . կը կռուին, կը հայհոյեն, կը ծեծուին եւ ամեն տեսակ խայտառակութիւն կը հանեն : Եթէ աղջիկ մը զօրաւոր է, աւելի շատ գնորդներ եւ աւելի բարձր գին կ'ունենայ : Այս մասին ասպա մի քանի դէպքեր եւ գիտողութիւններ պիտի ներկայացնենք : Գանք գլխաւոր տեղեաց ոմանց վիճակին :

Սահմանաւոր կը պարունակէ 290 տուն Հայ, որոյ 21ը բողոքական են : Հայք ունին եկեղեցի մը, երեք քահանայ եւ երկու դպրոց մանչերու եւ օրիորդաց յատկացեալ : Եկեղեցին ունենալով տարին 120 ոսկի արտադրող անշարժ կալուածներ, նոցա արդեամբ ժամանակէ ի վեր շատ աղէկ կը կառավարի : — Բողոքական ազգայինը յոյժ գթաւոր են իրենց քարոզչին պատճառաւ եւ ամենայն ինչ խառնակեալ է իրենց մէջ :

Տէնէ-Մաքէն կը գտնուին 46 տուն Հայք, ունին բարեկարգ վարժարան մը : Նաեւ բողոքական ազգայինը՝ որք 14 տուն են՝ ունին աղջկանց եւ մանչերու երկսեռ վարժարան մը :

Չորոս . կը պարունակէ 80 տուն Հայ, որոց 8 բողոքական են : Տեղւոյս Հայք գաղթած են 20 տարիէ ի վեր Կեսարիայէ, Եոզղատէ եւ շրջականերէ, ունին նորաշէն եկեղեցի մը շինուած 1881ին ժողովրդեան ջանիւք : Ունին նաեւ դեղեցիկ վարժարանի շէնք մը . դասատու մ'ունին Տիար Սեդեկիւլեան, որ գովելի ջանիւք կ'աշխատի ժամանակէ մ'ի վեր գթութիւն կը տրի տեղացի ազգայնոց միջեւ, որոց յոյժ անաղնիւ մէկ մասն Ամասիոյ Ճիզուլիթաց դիմած է իւր դպրոցն, եկեղեցին եւ մանկտն աւանց արտադրութեան ներքեւ դնելու, բայց ժողովրդեան աղնիւ եւ պարտաճանաչ մասը՝ ընդգիմացած եւ աղքատ միջոցներով արգիլած է :

— Բողոքական ազգայինը ունին քարոզիչ մը եւ դպրոց մը .

Աղջիկէ, արտաքոյ վիճակիս, Սեբաստիոյ առաջնորդութեան կը վերաբերի : Տեղւոյս Հայք գաղթած են 25 տարիէ ի վեր Կեսարիայէն, Սեբաստիայէն, Հաճնէն, Ակնէն եւ յայլոց քաղաքացի :

Սոյն ազգայինը 20 տարի է ի վեր եկեղեցւոյ մը շինութեան սկսած են, բայց այլ եւ այլ անդամներ եկեղեցւոյ գումարն հոգաբարձուաց վրայ մնացած եւ այժմ նոր ի նորոյ հանգանակութեան ձեռնարկած են . տա՛ր Աստուած որ յաջողէ լրացնել իրենց կիսկատար եկեղեցին :

* * *

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ե Ն Ո Ց

ՈՐ ԸՆԴ ՍՈՒՄԱՆՈՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԵՈՋՂԱՏՈՒ ԿԱՄ ՊՈՋՈՒԲԻ

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆՔ										ԲՈՂՈՒԲԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆՔ									
Անունը	Տուն	Անձինք	Եկերեցի	Դպրոց	Քանանայ	Վարժապետ	Աշակերտ	Օր. վարժ.		Տուն	Անձինք	Ժողովարան	Դպրոց	Քանոզիչ	Աշակերտ	Վարժապետ	Օր. վարժ.	Լեզու	
Եօղղատ	1700	104,000	1	4	4	8	550	1	32	200	1	2	1	82	2	1		Տ	
Ագտաղ - մատեն	35	495	1	1	1	1	40		4	25		1		14	1			Տ	
Բիւհրէնք	33	470	1	1	1	1	20		3	18				10	1			Տ	
Դերդիլի	180	1150	1	1	2	1	41		5	24								Տ	
Եասնայլ	23	10	1	1	1	1	30											Տ	
Ջամանար - սաշլը	4	25																Տ	
Էյլէնճէ	40	210	1	1	1	1	20		21	125	1	1	1	50	1			Տ	
Էքրէք	220	1311	2	1	5	1	100		2	10								Տ	
Թաշլը - Կէշիտ	13	70					7											Տ	
Թէնէք - մատեն	46	280	2	1	1	1	70		14	70	1	1	1	84	1			Տ	
Իյաէլի	50	271	1		1	1	20											Տ	
Ինճիլի	85	512	1	1	1	1			17	90	1	1	1	40	1			Տ	
Իւրնէշ	66	360	1	1	1	1	17		5	20								Տ	
Իքի - Գարա	4	37																Տ	
Մահարողլու	25	130	1		1				6	35		1		8	1			Տ	
Մէնէս	18	94	1	1	1													Տ	
Մէնթէշ	110	760	1		2				7	40	1	1	1	30	1			Տ	
Չաթ	126	730	*		1				4	17	1			10	1			Տ	
Չաքմաք	80	495	1	1	1	1	40		10	104	1	1	1	51	1			Տ	
Չառլմ	80	650	1	1	1	1	64		7	40	1	1	1	40	1			Տ	
Չոքրատան	45	210	1		1													Տ	
Պէպէք	42	405	1		2	1	12											Տ	
Պիւլիւրէն	35	309	1		1													Տ	
Պողազլայան	171	1030	1	1	2	1	45		13	70		1	1	15	1			Տ	
Պուրուհքըշլա	170	1100	1	1	2	1	51											Տ	
Սարայ	72	640	1		1													Տ	
Սարը - Համգա	70	570	1	1	1	1	35		17	105	1	1	1	30	1	1		Տ	
Սարը - Համգա, Չիլթի	5	30							2	10								Տ	
Սաշլը	40	250	1	1	1													Տ	
Սաադլը	41	240	1		2				7	35		1		14		1		Տ	
Սարողլան	55	310	1	1	2	1	60		2	11								Տ	
Սարմուսագլը	80	470	1	1	2	1	70		4	19				14	1			Տ	
Սըվդէն	50	315	1	1	2	1	51											Տ	
Սունկուրլու	290	1770	1	1	3	4	175	1	21	105	1	1	1	20	1	1		Տ	
Տէրի - Համգա	14	84	1		1													Տ	
Րուս - տիկին	210	1761	1		2				15	76	1	1	1	70	1			Տ	
Քարա - Եագուս	67	410	1		1				4	15								Տ	
Քարա - Հալլը	53	640	1		2													Տ	
Քարա - Պըյըք	30	180	1		1													Տ	
Քարա - Չալըր		19																Տ	
Քէլլէր	120	750	1		2				10	90				37	1			Տ	
Քէտիլէր	29	172	1		1				4	18				7	1			Տ	
Քիւշիւք - Չաթ	18	80	1		1				2	11								Տ	
Քիւվէլի	40	240	1		1													Տ	
Քիւհնէ	50	310	1	1	1	1	50		2	8								Տ	
Քիւմ - Գույու	30	190	1		1													Տ	
Քուրդան	42	250	1		1													Տ	
Քիւրքճիւ	8	10																Տ	
Քիւրք	47	284	1		1													Տ	
Օհան - չիֆթլիյի	4	30																Տ	
Չաքրալը	30	180	1		1													Տ	
	24,810	125,177	44	37	64	31	1549	2	252	1441	11	16	10	611	20	4		22,729	

Մեր վերոյիշեալ տեղեկագրին ակնարկ մը միայն նետելով, կը տեսնենք որ, սոյն 52 գիւղորէից կամ աւանաց մէջ կը գտնուին 24870 տուն, 125177 անձինք, 44 եկեղեցի, 37 դպրոց, 64 քահանայ, 31 վարժապետ, 1549 աշակերտ եւ 2 վարժարան օրիորդաց համար, իսկ Բողոքական աղքատիք՝ 252 տուն, 1441 անձինք, 11 ժողովարան, 16 դպրոց, 10 քարոզիչ, 611 աշակերտ, 3 վարժարան օրիորդաց եւ 20 վարժապետ:

Սոյն վիճակայնոց 22 գիւղերը Հայերէն կը խօսին, եթէ կրնայ տրուիլ սոյն անունն ապականեալ թրքերէնով՝ լատին կոպիտ հընչումով լեզուի մը: Սոյն վիճակին մէջ երկու տեղ միայն օրիորդաց յատուկ վարժարան կայ յեղեղատ եւ ի Սունկուրլու: Գեղեցիկ սեռին դաստիարակութիւնը բնաւ կարեւորութիւն եւ յարգ չունի. մանաւանդ շատ կը զարմանան գիւղացիք երբ լսեն թէ՛ աղջկունք եւս կը կարդան քաղաքաց մէջ:

Ի բաց առեալ Եղեղատ, Սունկուրլու եւ Զորում՝ միւսներուն դպրոցները միայն ճամբան երեք ամիսներն եւ գարնան մէկ կամ երկու ամիսները բաց կ'ըլլան. դպրոցը ըսելով յատուկ չենք մը չը հասկցուի. այլ կամ Կահեային (գիւղապետ) սենեակին կամ տէրտէրին տաքուկ գոմը. կը կարդան միայն Սաղմոս, Աւետարան, Գործոց եւ Նարեկ, եւ այլ ոչինչ. երբեմն քիչ մ'ալ գրել: Իրենց վարժապետներն եւս գիւղին տիրացուն է, որ սովորաբար փիլիսոփայի համբաւ կը վայելէ. իր վարձքն է կալի ատեն 2-3 Բոյջէք ցորեն:

Թէ՛ ծեր թէ՛ երիտասարդ ձմեռները կը ժողովին դոմերու սենեակներն, յորս շատ անգամ քահանային սենեակն հրապուրիչ է իւր սուրճին եւ կրակին առատութեամբը, Հոս կ'սկսին միմեանց հետ թուղթ խաղալ, կռուիլ փուճ պատճառներու համար, կամ ասոր էլ, միւսին կովը, եղը, մէկ ուրիշին գոմէջը գովել եւ եւ: Բնաւ ազգային զգացում չունին:

Նիւթաւորին դալով, սա եւս բարոյակաւնէն բարեբաղդ չէ: Գրեթէ 100ին 95ը աղքատ են, եւ սորա միմիայն պատճառն 74ի սարսափելի սովէն կ'սկսի, յորում իրենց բոլոր անասունները անօթութենէ եւ այլ ախտերէ բոլորովին փճացան, եւ երկու

րորդ ասորին՝ ամբողջ Պողոսի դաւառին մէջ (75ին) միայն 37 ոչխար եւ 44 անասուն մնացած էր, մինչդեռ առջի տարիներն սոցա հազարաւորներն ունէին: Անխիղճ վաշխառուներն ասկէ օգուտ քաղելով, շատ անգամ 100ին հարիւր շահով դրամ տուած են, զորս պարտաւորեալ էր խեղճ գիւղացին առնուլ: Բազումք ծանրածանր տոկոսեաց ներքեւ կը հեծեն, եւ իրենց 10 ամիս աշխատանաց արդիւնքը տալով չեն կրնար Գոհար հատուցանել: Աւելցուր ասոր վրայ առուտուրի անգործութիւնն, որոյ պատճառաւ առաջ լիարը 15 դահեկանի ծախած ալիւրը, այսօր 100 փարա կամ 5 դահի հազիւ կրնայ վաճառել: Եւ ի լրումն դժբաղդութեան, յաւել Կալապիտի սէրն, որով պարտաւորեալ են գողցես, փոխանակ իրենց զխմացկուն եւ կոշտ հանդերձներուն քաղաքացւոց հագած փուտ եւ ծանրագին հանդերձներն հագնիլ, եւ այն եւս պարտաւ: Ահա այս կերպով կը փճանան խեղճերն առանց զգալու եւ առանց իրենց աղքակցաց կամ բարեբարաց գութին արժանանալու:

Վ.ՏԱՐԱՆԻՆ

ԶԱՆԱԶԱՆՔ

40 ԹԻԻԸ

Սեւերեկէն Պ. Խ. Թ. 40 թուոյն խաղցած դերին վրայ հետեւեալ յօդուածն կը զրկէ մեզ, զոր պատրաստած է իւր իսկ մանրակրկիտ քննութեամբ եւ բազմակողմանի հետախուզութեամբ.

Շատերը կարդացած են բազմիցս հին եւ նոր Ատակարանները եւ յեղեղած իրենց հաշուոց մէջ այլ եւ այլ թիւեր. կարծեմ քիչերու ուշադրութիւնը պէտք է դրաւած լինին մասնաւոր թիւեր, որք իբր խորհրդաւոր թիւ շատ անգամ գործածուած են թէ՛ ի Ս. դիրս եւ թէ՛ այլուր, հետեւաբար մեծ տեղ բռներ են միւս թուոց նկատմամբ: Ընդհանրապէս այս կարգէն կրնան համարուիլ 1, 3, 7, 9, 12 եւ ուրիշ թիւեր, բայց ըստ մեզ 40 թիւը ամենէն նախադաս է, զի Ս. դրոց մէջ սկիզբէն մինչեւ վերջը շատ գործածուած եւ ըստ այնմ կարեւոր դիրք

մը բռնած է նա բաղդարմամբ միւս թուոց։
 Նոյ նահապետի ժամանակ երբ մարդիկ բաղմանալով աշխարհի վերայ, սկսան ապականել զերկիր իրենց անօրէնութեամբ, Աստուած սորջացաւ զանոնք ստեղծելուն եւ կ'ուզէր ջնջել երկրի երեսէն, բայց իր անսահման համբերութեամբ եւ մարգարտութեամբ 3 անգամ 40 տարի միջոց տուաւ անոնց ապաշխարելու, Ծնն. 9. 3: Սակայն մարդիկ յամառ մնալով իրենց չարութեանց մէջ, ջրասոյգ եղան վերջապէս 40 օրեայ յորդահոս անձրեւօք: Ծնն. 1. 17: Միայն Նոյ ողորմութիւն գտնելով Աստուծոյ առջեւ ազատեցաւ իրեններով շինած տապանին միջոցաւ: Երբ տապանը հանդեաւ Արարատայ գագաթը, Նոյ 40 օր սպասելէ վերջ տապանի պատուհանը բանալով ազաւաւ արձակեց Ծնն. Ը. 6: Կըսուի թէ Աբրահամ չափազանց հիւրասիրութեամբ 40 օր ծով պահել հարկադրուեցաւ հիւր մը չը կրնալ ընդունելուն համար եւ 40րդ օրը երեք հիւր ընդունեց: Յովսէփ 40 տարեկան էր երբ իւր հայրը Եգիպտոս բերել տուաւ Ծնն. ԽԱ. 46 եւ ԽԵ. 6: Յակոբ նահապետ Եգիպտոսի մէջ վախճանելով, Յովսէփ, իւր որդիւն, զմուսել տուաւ նորա մարմինը եւ 40 օրը լննալէն վերջը մարմինը զմուսելու օրերը 40 օր կը հաշուըուէր Ծնն. Ծ. 3: Մովսէս երբոր 40 տարեկան եղաւ, ուղեց իրեններուն այցելութիւն ելնել (Գործ. Է. 25) եւ Եգիպտացիին սպաննելուն համար Փարաօնէն վախնալով Մադիամու երկիրը փախաւ, ուր 40 տարի մնալէ վերջ (Գործ. Է. 30) Գորէբ լերան վրայ 10 անգամ 40 տարի գերութեան մէջ մնացած Իսրայէլի ազգը ազատելու համար պատգամ ընդ ունեց: Նոյն մարգարէն 2 անգամ 40 ական օր ծով պահեց Սինա լեռան վրայ տասնաբանեայ պատուէրը ընդունելու ատեն, Ելից ԻԴ. 18 ԼԴ. 28: Եգիպտոսէն ելնող Իսրայէլի ժողովուրդը ճշմարիտ սրտիւ Աստուծոյ չդաւնալուն համար 40 տարի թափառեցաւ անասլատի մէջ: Մովսէսի հրամանաւ ամէն արու 40 օրէն ընծայով մը տաճարը կը տարուէր մեղաց քառութեան համար Դեւ. ԺԲ. 2-8, ինչպէս Յիսուս ալ յարգեց նոյն օրէնքը: Մովսէսի Գանանու երկիրը զրկած մարդիկը 40 օրէն դարձան Թա. ԺԴ. 26: Մովսէս Գորէբ լերան վրայ տեսած տեսիլքէն 40

տարի յետոյ կամ որ նոյնն է 3 անգամ 40 տարի ապրելով վախճանեցաւ Բ. Օր. ԼԴ. 7: Իսրայէլացիք նորէն Տիրոջը առջեւ չարութիւն ընելուն համար, Տէրը զանոնք Փղշտացւոց ձեռքը մատնեց 40 տարի Դատ. ԺԳ. 1: Առաջին դատաւորը Գութոնիէլ 40 տարի դատաւորութիւն ընելով, երկիրը 40 տարի հանգստացաւ Դատ. Գ. 11: Հրէից դատաւորներուն պատուիրութեամբ էր յանցաւորները 40 էն աւելի չձեծել Բ. Օր. ԻԵ. 3: Այս պատճառաւ տեսալ մը եռահարուածեան գաւաղան շինուած էր, որով 15 անգամ կը զարնէին յանցաւորին եւ այսպէս 40 էն մէկ պակաս կը հաշուըուէր, ինչպէս Պօղոս առաքեալ կը գրէ Բ. Կորն. ԹԱ. 24: Վերջին դատաւորը Հեղի 40 տարի դատաւորութիւն ըրաւ Ա. Թագ. Դ. 18: Իսրայէլացիք թագաւոր կ'ուզէն Աստուծմէ, Սաւուղը կուտայ 40 տարի, Գործ. ԺԴ. 21. Նոյնպէս Դաւիթ և Սողոմոն 40ական տարի թագաւորութիւն ըրին Ա. Մն. ԻԹ. 27 Գ. Թագ. ԺԱ. 42: Աստուածային նախանձախնդրութեամբ ի Մարգարէն Եղիա՝ 40 օրեայ ծովապտուկէն վերջը պատեհութիւն կ'ունենայ Գորէբ լերան վրայ՝ Աստուծոյ հետ խօսիլ, Գ. Թագ. ԺԹ. 3-19: Եղեկիէլի հրաման կը տրուի յԱստուծոյ 540 օր ձախ կողմի վրայ պառկիլ Իսրայէլի անօրէնութիւնը կրելու համար եւ այդ օրերու լննալէ վերջը 40 օր եւս պառկիլ, Եգեկ. Դ. 6: Յովսէս մարգարէն Նինուէ մտած օրը սկսաւ քարոզել ժողովրդեան եւ ըսել թէ 40 օրէն Նինուէ պիտի կործանի (1): Քրիստոս յետ քառասնօրեայ պահոց սատանայի փորձութեանց ենթարկուելով՝ յաղթեց նմա և շատ մը քարոզութիւններ ու հրաշքներ ընելէ վերջը, եթէ չեմ սխալիր, 40 ժամեայ մահուամբ դժոխքը աւերելով դերեալները ազատեց եւ անապականութեամբ յառնելով ի մեռելոց՝ 40 օր աշխարհի վրայ երեւնալէ վերջը փառօք յերկինս համբարձաւ: Մեր Հայաստանեայց եկեղեցին ալ 40 օրեայ պահեցողութենէ վերջը 40 օր ալ Յարութեան տօն կը կատարէ և ոչ այսչափ միայն, այլ եւ տարւոյ մէջ 40 կիւրակի միայն Յարութեան տօնախմբութիւն կը լինի. 52 շաբաթէն մեծ

(1) Գրաբառի մէջ, ինչպէս յայտնի է, 3 օր դրուած է:

պահոց, Համբարձման, Պէնտէկոստէի, Վարդավառի, Վերափոխման եւ Խաչի կիւրա-կիները բառնամք, արդիւնքը 40 կ'ենէ: Մատթէոսի ազգաբանութեան մէջ 40 ան-ձինք կը յիշուին, իսկ Ղուկասինը երկու 40⁽¹⁾:

40 թիւ խորհրդաւոր, սահման մարդ-կային անսուաղութեան, զոր փորձած են քանի հոշակաւոր բժիշկներ, ծայր եւ վախ-ճան զարգացման մարդոյ, յորմէ հետէ կ'ըս-կըսի նուազիւ և անզօրանալ բնականապէս:

Կայսերական Օրէնսդիր ժողովոյ ուշադ-րութենէն ալ վրիպած չ'իյնելով այս խոր-հրդաւոր թիւը, յաճախ դործածած է ջր-հոր փորելու, մարդ վիրաւորելու եւ ներու-նկատմամբ եղած օրինաց մէջ:

Այս տեղեր ամէն ազգ ալ ստէպ կը գոր-ծածէ 40 թիւը, այնպէս որ չափազանցօրէն փոխանակ 50-90 ըսելու 40 կ'ըսուի. որ ըսել է 100 էն վար ամենէն մեծ թիւ հա-մարուած է, եւ եթէ մէկը չափէն վեր խո-սի, կը պատասխանուի նմա առ ի զգու-շութիւն, որ կոկորդի 40 աստիճանները համրեւէ վերջը խօսի: Կարծեմ տակաւին կան շատ մը գործածուած 40 ներ զորս հե-տաքրքիրը կրնայ գտնել:

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱՔԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

7-14 ՅՈՒՆԻՍ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Անգլիոյ պահպանողական նոր Նախարա-րութիւնը կազմուեցաւ հետեւեալ կերպիւ.

Լորտ Սալիսպըրի, Նախարարապետ եւ Նախարար Արտաքին գործոց, փոխանակ Պ. Կլատսդոնի եւ Լորտ Կրանվիլի.

Սըր Միքայէլ Հիքս Պէչ, Ներսիսից Նա-խարար, փոխանակ Պ. Չիլտըրսի.

Սըր Սք. Նորթբրոք, Նախագահ Պետա-կան Խորհրդոյ, փոխանակ Լորտ Քաւելինկ-Փորտի.

(1) Աշխարհագր թարգմանութեանց մէջ 77 ա-նուս կ'ենէ Յակոբի, Ադմիա եւ Ասնեա անուանքն զանց աւելուած լինելով:

Սըր Հ. Կիֆֆարտ, Նախագահ Լորտե-րու Ժողովոյն եւ Դատական Նախարար, փոխանակ Լորտ Սէլպորնի.

Սըր Ռ. Քրոս, Նախարար Ներքին գոր-ծոց, փոխանակ Սըր Ուիլիամ Հարբորդի.

Պ. Գնդապետ Սդէնլի, Գաղթականու-թեանց Նախարար, փոխանակ Լորտ Տէր-պիլի.

Պ. Ո. Սմիթ, Պատերազմական Նախարար փոխանակ Լորտ Հարթինկլիթընի.

Լորտ Ջորճ Հալիվելլ, Ծովային Նա-խարար, փոխանակ Լորտ Նորթպրոքի.

Լորտ Ռանտոլֆ Չըրչիլ, Անդամ Նախա-րարութեան վասն Հնդկաստանի, փոխանակ Լորտ Քիմպլըիլի.

Լորտ Քարնարվոն, Նախարար եւ Փո-խարքայ Իռլանտայի, փոխանակ Լորտ ԸՍ-բէնսըրի.

Լորտ Ջ. Մէննըրս, Ընդհանուր Տնօրէն Թղթատարութեանց, փոխանակ Պ. Շո-Լը-ֆէվրի:

Թէպէտ շաբաթէ մ'ի վեր հասած հե-ռագիրք կը յայտնէին թէ Լորտ Սալիսպըրի կը վարանէր գործոց գլուխ անցնիլ, ազա-տական կուսակցութեան և իւր միջև ծագած դժուարութեանց պատճառաւ, եւ կը կար-ծուէր թէ Պ. Կլատսդոն վերադառնայ յիշ-խանութիւն գործերը վարելու համար մին-չեն յառաջիկայ ընտրութիւնները, քանի որ միշտ իւր կողմունի երեսփոխանութեան ա-զատական մեծամասնութիւնը, սակայն յու-նիս 13/25 ին հեռագիր մը ծանոց թէ Լորտ Սալիսպըրի վերջնապէս ընդունած է Նա-խարարապետի պաշտօնն եւ թէ պահպա-նողական Նախարարութիւնն հաստատ-ուած է:

— Մատիտի մէջ Քոլերայի գոյութեան պաշտօնական հրատարակութիւնը մեծ յու-զում և անկարգութիւններ յառաջ բերաւ: Յունիս 20 թուով կը հեռագրուէ. «Արուար-ճանաց բնակիչք քաղաքաբնակ խանութպան կանանց խմբեր երէկ ցոյց մ'ըրին Պ. Քանտփասի Նախարարութեան դէմ: Սեւ դրօշակը պար-զուեցաւ: Բարեկարգութիւն վերահաստա-տելու համար զրկուած ոստիկանք քարերու կարկուտով մ'ընդունուեցան: Յոյցին հեղի-նակներէն իբր 20 անձինք ձերբակալեցան»:

Յունիս 21 թուով. «Վաճառականաց Միութեան Ակումբն հրաւէր կարդացած

Ն Ե Ր Ք Ի Ն

էր Մատրիտի բնակչաց՝ խաղաղ ցոյց մ'ընել ընդդէմ Պ. Գանովասի նախարարութեան, որ պաշտօնապէս յայտարարելով թէ հընտախտ կայ մայրաքաղաքին մէջ, խորին զայրոյթ պատճառած է Մատրիտցւոց: Ըստ այսմ, երէկ, դեղարաններն և ծխախոտի խանութներն ի բաց առեալ, ամեն վաճառատունը, խանութը և գրասենեակը փակ էին: Շատ բազմութիւն կը շրջէր փողոցներու մէջ: Օրն հանդարտ անցաւ. բայց երեկոյեան դէմ, Ներքին գործոց Պաշտօնատան առջեւ համախմբեալ ամբոխն աղաղակեց. «Անկցի՛ նախարարութիւն»: Աղմուկը կը շատնար. ոստիկանութիւնը միջամտեց, և զինու զօրութեամբ յետս մղեց բազմութիւնը Պաշտօնատան շրջակայներէն:

— Պոմպէյէ կը հեռագրուի յունիս 20ին. 2,000 աֆղան զօրք Քանտահարէ հասան Հերադ: 10,000 Մարդինի հրացանք Քեապուլէ Հերադ ղրկուեցան:

— Ռուսական Նախարար լրագիրն, որ բանիցս պնդեց թէ Ապո-իւր-Բահման սպաննուած է, այժմ կը ծանուցանէ թէ Էմիրն երեւցած է աֆղանեան թուրքաստանի մէջ, իւր հետ ունենալով իւր բանակի մեծագոյն մասը, զոր համախմբեր է Ամու-Տարիա գետին մօտ, Հերադի ճամբուն վրայ: Նախարար կը յայտարարէ թէ Աֆղանաց Էմիրը կը սկսուայ Մերվի և Սարախսի, և կը պահանջէ որ Ռուսիա զինու զօրութեամբ յետս մղէ զնա:

— Պ. Տիւրիւի, Ֆրանսացի հռչակաւոր պատմագիրը, Կրթական Նախարար 1865է-1869, յունիս 18ին Ֆրանսական Ակադեմիոյ անդամ ընդունուեցաւ իբրեւ յաջորդ հանգուցեալ պատմագիր Մինեէի: Օդէօնի Եպիսկոպոս Բէրրօ գերապայծառն արտասանեց ի դիմաց Ակադեմիոյ ընդունելութեան ճառը: Գերապայծառն երբեմն աչակերտած էր Պ. Տիւրիւի:

— Անգլիոյ Թագուհին Կոմսութեան աստիճանաւ Լորտութիւն տաջարկեց Պ. Կլաւորսոնին, բայց նա չընդունեց հանդերձ խորին շնորհակալութեամբ:

Այս իրողութիւն ապացոյց կը համարուի թէ Պ. Կլաւորսոն մտաւոր է կռուոյ ասպարէզին վրայ մնալ միշտ, եւ մասնակից լինել Ազատականաց պայքարին առաջիկայ ընդհանուր ընտրութեանց մէջ:

Կայս. Կառավարութեան հաշուոյն Թուրքի Ֆօթ Ե Շահիէ գործարանին մէջ շինուած ծովամբակիր երկու շոգենաւք Պոսոյ նաւահանգիստը բերուեցան:

— Պուրքէշի Օսմանեան հիւպատոս Սիւլէյման պէյ, որ բաւական ժամանակէ հետէ հիւանդ էր, մեռաւ անցեալ շաբթու: Յաջորդը նշանակուած չէ դեռ:

— Վերջին մայիս ամսոյ մէջ Միջերկրականէն Պոլսոյ նաւահանգիստն եկած են 515 շոգենաւք և 11845 ուղեւորք. իսկ Միջերկրական դնացած են 156 շոգենաւք եւ 8715 ուղեւորք: Նոյնպէս Սեւ ծովէն եկած են 65 շոգենաւք եւ 7759 ուղեւորք, իսկ Սեւ ծով դնացած են 99 շոգենաւք և 5529 ուղեւորք:

— Քուէրային Սպանիոյ մէջ բազմանալուն պատճառաւ, Առողջապահական Խորհուրդն որոշեց Սպանիայէն եկող շոգենաւուց համար հաստատեալ Քարանթինան աւելցնել:

Միջերկրականի կամ Ովկէանոսի սպանիական մէկ նաւահանգիստէն Օսմ. նաւահանգիստ մը եկող բոլոր նաւերն առանց խտրութեան տասն աւուր քարանթինայի պիտի ենթարկին, զորս պիտի կրեն Ափրիկեան Տրիպոլիոյ, Պէրութի կամ Քլադոմէնի (Իզմիր) մաքրանոցաց մէջ:

— Կրթական նախարարութեան մէկ նոր որոշման համեմատ, օտար երկիրներու մէջ որ եւ է լեզուաւ հրատարակեալ գրքեանք այսուհետեւ թուրքերոյ մէջ ի վաճառ ենթարկուին: Այլ եւ այլ լեզուաց հմուտ գրաքննիչ պաշտօնեայք կարգուած են յիշեալ նախարարութեան կողմէ, մաքսատունէն ստանալու համար բոլոր նոր հասած գրքերն ու զանոնք աչքէ անցունելու համար. յետ այս քննութեան, կնիք մը պիտի դրոշմուի այն հատորներու վրայ որք մնասակար բան մը չեն պարունակէր. իսկ առնոյր որք հանրային բարոյականի ու կրօնի հակառակ դատուին, պիտի գրաւուին:

— Ալեքսանդրիայէն կը գրեն թէ տեղւոյն Յունաց Պատրիարքը դատի մ'առնութիւ երդում ըրած լինելով Գահիրէի դատարանաց առջեւ, այս բան յոյժ վատ տը-

պաւորութիւն ըրեր է ո՛չ միայն Յունաց, այլ եւ միւս ազգի հասարակութեանց վրայ, ըստ որում եկեղեցական օրէնքն ո՛չ միայն Պատրիարքին, այլ քահանայի մ'իսկ կ'արգելու դատարանի մ'առջեւ երդնուլն:

— Կայս. Դիւանի Պէյլիկձի Նիսպի էֆէնտի յանկարծամահ եղաւ:

— Կըսուի թէ Կայս. Կառավարութիւնը մտադիր է Օսմ. Կայս. Պանքային յանձնել Հայտարարաւայէ Նիկովիդիա երկաթուղոյ գիծն երկարելու արտօնութիւնը, վասնզի յիշեալ դրամատան պայմանը միայն ընդունելի դատուեր են:

Ա Զ Դ Ա Յ Ի Ն

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն անցեալ կիրակի օր հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց եւ քարոզ խօսեցաւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ: Գաւառացի եւ Պոլսեցի ազգայնոց խումբն բաղմութիւն կը լնուր տաճարն: Ս. Պատրիարքն իւր քարոզի մէջ բացատրեց այն բարձր ու վսեմ նշանակութիւն զոր ունի մեզ համար Ս. Լուսաւորչայ տօնն: Ի վերջ բանից, ջերմագին բարեմաղթութիւններ ըրաւ վասն կենաց Վեհ. Սուլթանին եւ Նորա լուսամիտ նախարարաց:

Յաւարտ եկեղեցւոյն, փառաւոր սեղան մը տրուեցաւ Ս. Պատրիարք Հօր, Ազգային Մատենադարանին մէջ: Սեղանին կը մասնակցէին քսանէ աւելի պատուաւոր ազգայիններ եւ Թաղային Յանձնաժողովոյ անդամք:

— Նոյն օր Ամեն. Խրիմեան Սրբազան քարոզ խօսեցաւ Գուգիւունճուզի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ: Բազմութիւնն անհուն էր: Եկեղեցին, որ արդէն փոքր է, չափ նեղ կուգար պարփակելու յոգնախուռն ամբոխն որ մայրաքաղաքիս ամեն կողմերէն շողենաւերով կը ժամանէր ի Գուգիւունճուք:

Ս. Հայրիկի քարոզին նիւթն էր յորդոր մը առ ժողովուրդն յաշխատասիրութիւն և ի տնտեսագիտութիւն, որք միակ միջոցներն են թշուառութիւնը բառնալու աղքատ դատուն մէջէն: Յիշելով Ս. Գրոց սա խօսքը թէ «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ եւ բանիւն Աստուծոյ», բացատրեց թէ հացն ալ Աստուծոյ բանին չափ հարկաւոր է մար-

դուս գոյութեան: Յաւարտ քարոզին, գովեց Միացեալ Ընկերութիւններն եւ Իւսկիւտարի Ազգատախնամ ընկերութիւնը:

— Վանէն տրուած վերջին լուրերէ կ'իմանանք թէ նոր եւ յանկարծական ձերբակալութիւն մ'եղած է քաղաքին մէջ:

— Կը լսենք թէ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն Ազգ. Պատրիարքարանի շէնքին անբաւականութիւնը նկատելով, մտադիր է եղեր Պատրիարքարանի կից գտնուած տունը դնել եւ Պատրիարքարանի հետ միացընել:

— Ասկէ առաջ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ հեռագիր զարնուած էր Վանայ Առաջնորդական Տեղապահ Գեր. Պօղոս Եպիսկոպոսին, տեղեկանալու համար թէ փոխանակ էջմիածնի Կաթողիկոսի՝ Աղթամարայ Կաթողիկոսի անուան յիշատակութեան շարժառիթն ի՞նչ է եւ ո՞րք են հեղինակը:

Ս. Պատրիարք Հայրը նկատելով որ Գեր. Պօղոս Եպիսկոպոս ցարդ տեղեկութիւն տրուած չէ այս մասին, ստիպողական նամակ մ'ուղղեց, պահանջելով որ հարկ եղած տեղեկութիւնները փութացնէ. միանգամայն ծանուցանէ թէ Վանայ Գաւառ. Վարչութիւնն այս մասին ի՞նչ միջոցներ ձեռք առած է, եւ թէ տակաւին կը շարունակուի՞ Վանայ մի քանի եկեղեցեաց մէջ Աղթամարայ Կաթողիկոսի անուան յիշատակութիւնը:

— Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ Ազգ. Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութիւնն այդ հաստատութեան յատակագիծն հանել տուած է, իբրեւ նախապատրաստութիւն վերաշինութեան Ազգ. Հիւանդանոցի, որոյ պէտքը տարիներէ հետէ յոյժ զգալի եղած էր: Առ այժմ կ'սկսուի Յիմարանոցի ճիւղին վերաշինութիւնը: Բարեպաշտ ազգային ոմն, որոյ անունն առ այժմ չենք հրատարակեր, յանձն առած է մինչեւ հինգ հազար (5,000) ոսկի տալ Հիւանդանոցի վերաշինութեան: Եւ կը հաշուուի որ եթէ ուրիշ բարեպաշտ ազգայիններ ալ եթէ ոչ նոյնչափ գոնէ 5,000 ոսկի եւս տան, ամբողջ վերաշինութեան կը բաւէ. զի արդի շէնքի ատաղձներէն ու շինուածանիւթերէն մեծ մաս մը կրնայ գործածուիլ, եւ զի շատ մը պէտքեր եւ գործաւորներ ածան կամ ձրի պիտի կրնան ձեռք բերուիլ այսպիսի շինութեան մը համար:

ԴԱՇՏԱՅԻՆ ՀԱՆԴԻՍ

ԱԶԳ. ՀԱՅՈՒՆՆԵՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅՈՒԼԻՍ 15/25 ՇՈՒՄԹ ԳԻՇԵՐ

Ի ՊԵՏԻԻՖՏԵՐԻ, ՎՍԵՄ. ԲՈՐՈՒԹԵՆԱ
ԿՈՐԱՊԵՏ ՊԵՏԻ ՊՈՐՏԻՋԻՆ ՄԷՋ

Սոյն դաշտային ցայգահանդէսի Կարգադիր Մասնախումբն ու եւ է ջանք խնայած չէ հանդիսին տալու համար ամենափայլուն յաջողութիւն մը :

Շիրքէթի խայրիէի մասնաւոր շողենաւ մը կամուրջէն պիտի մեկնի երեկոյեան ժամ 7½ին (Բ. Ե.) և իւսկիւտար, Պէշիկթաշ, Օրթաքէյ, Արնաւլուքէյ, Պէպէք, Հիւսար, Էմիրկէն, Նէնիքէյ, Թարապիա, Մէսարպուրնու և Նէնիմահալէ հանդիպելէ յետոյ, Պէյօյիւքտէրէի մարգագետինն նաւամատոյցը պիտի ժամանէ :

Մասնաւոր ընկերութեան շողենաւ մ'ալ ժամ 7ին պիտի մեկնի Մեծ Կղզիէն և Հէյալէի, Գընալը և Գատքէյ հանդիպելէ վերջ նոյն նաւամատոյցը պիտի երթայ :

Տոմս ունեցող մէն մի անձ իրաւունք ունի իւր հետ տանիլ երկու Տիկին, ինչպէս նաև ձրի մուտք՝ շողենաւուց մէջ :

Մտից տոմս չունեցող անձինք կրնան հայթայթել զայնս Մէմուրներէն: Երկու շողենաւերն առաւօտեան ժամ 5ին պիտի մեկնին նմանապէս ձրիաբար վերադարձնելու համար ուղեւորները, նոյն նաւամատոյցներն հանդիպելով :

Այս հանդէս մասնաւորապէս բարձր դասուն վերապահեալ լինելով, յատուկ հիւրամեծարներ պիտի հսկեն այս տնօրինութեան ճշգրիտ գործադրութեան, ինչպէս և բարեկարգութեան կատարեալ պահպանման :

Ցայգահանդէսին հրաւիրեալը, արդէն վստահ՝ ընտանեկան հանդէսի մը բոլոր հանգամանքները գտնելու Յուլիս 15/25ի երեկոյթին մէջ, պիտի վայելեն նաեւ մոգական տեսարան և բազմաթիւ զուարճութիւններ զորս Կարգադիր մասնախումբն պիտի ջանայ աւելցնել: Այսպէս, Վսեմ. Կարապետ պէյ բարեհաճած է 351 ծառ կտրել տալ, ընդարձակ պարասրահի տեղ բանալու համար :

Պոլսոյ լաւագոյն վարպետներէն բաղկացեալ նուագաժողաց խումբ մը պիտի եղանակէ զիշերն ողջոյն :

Տերեւներուն մէջ ցան ու ցիր բազմաթիւ լապտերներ, մեծ ծառուղիներու մէն մի ծառերէն կախուած կանթեղներ արդարեւ հմայիչ տեսարան մը պիտի ընծայեն : Պարասրահին մօտ գտնուող լճակը, զոր ուռճալիւր լուսինն արծաթագեղ ցոլերն և ջրի սահանքներն հրապուրիչ պիտի ընծայեն, պիտի ներկայացնէ դիւթական տեսարան մը ի շնորհս Վենետիկեան բիւրաւոր լապտերներու, որով պիտի լուսաւորուի լճափը :

Հրախաղութիւնը պիտի լինին լաստի մը վրայ :

Ջրին եզերքը, բարձրաբերձ ծառերուն տակ, պիտի զետեղուին չքեղ հովանեակներ յորս տիկնայք և օրիորդք հանդիսակա նաց տրամադրութեան ներքեւ պիտի դնեն ամեն տեսակ զովացուցիչ ըմպելիներ :

Կարգադիր մասնախումբին Տիկնայք պիտի բռնեն ճոխ չքասեղան մը, որ չափաւոր դիւներ պիտի սահմանուին առաջուց: Հանդիսականը պիտի գտնեն անդ որոշեալ եւ չափաւոր գնով ընթրիք մը, զոր պիտի մատակարարէ Պոլսոյ առաջնակարգ ճաշարանն :

Տիկնանց համար հանգստեան եւ արդուզարդի սրահներ, հանդերձասրահ, հրացանաձգութիւնը, ձկնորսութիւն, Թումպուլա, կլորող եւ այլն պիտի հաստատուին զանազան հովանեակներու մէջ: Ի մի բառ, ոչ մէկ հանգստութիւն եւ ոչ մէկ զուարճութիւն պիտի պակսին այդ հանդէսին, որուն անզուգական փայլ մը տալ կուզէ Կարգադիր Մասնախումբը Վստիորի եզերաց վրայ :

Մասնաւորապէս կը խնդրուի մեղնէ ծանուցանել թէ հանդէսը դաշտային լինելով, տիկնանց համար հարկ չկայ ձմեռնային սարահանդէսներու նման մեծածախ և ճոխ արդուզարդի, այլ թէ սլարդ և վայելուչ զգեստ մը կը բաւէ :

ԱՐՄԵՆԻԱ

ՀԱՅԵՐԵՆ ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գաղաքական, Գրական,
Գիտական, Եւայլն

Յառաջիկայ օգոստոս 1ին (20 յուլիս)
շաբաթ օրը պիտի հրատարակուի ՄԱՐ-
ՍԷՅԼԻ մէջ, շաբաթն երկու անգամ:

ՉՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՆ ՇՍԲԱԹ օրեր

Տարեկան բաժանորդագրինն է 20 Փրանգ
Եւրոպայի համար, 1 օսմ: ոսկի՝ Թիւրքիայի
համար և 10 րուբլ թղթադրամ՝ Ռուսիայի
համար: Խմբագրութիւնն ինք կը վճարէ
փոստի ծախքը ամեն տեղի համար: Վճա-
րումները կԱՆՍԻԿ կը լինին: Տարեկանը
միանուագ վճարելու անկարողներէն դիւ-
րութեան համար կ'ընդունինք նաև մաս առ
մաս (վեցամսեայ կամ եռամսեայ) կանխիկ
վճարումներ, առանց ունէ յաւելում անե-
լու տարեկան բաժանորդագրինն վրայ:
Արժէի խմբագրութիւնը ծանօթ լինե-
լով Թիւրքիայի, Ռուսիայի և Պարսկաստանի
Հայերի դրութեան, նկատի կ'առնէ նոցա
տիրող պետութիւնները հաստատած օ-
րէնքները և ըստ այնմ կ'աշխատի հայ ազգի
մեծամասնութեան օգտակար մի թերթ լի-
նիլ:

Թերթն անսլատճառ պիտի հրատարակ-
ուի որոշուած ժամանակը (Օգոստոս 1/20
Յուլիս): Ուստի հրաւէր կը կարգանք ամեն
ընթերցասէր Հայերին որ եթէ իրենց բաժ-
նորդագրութեամբ մեր թերթ քաջալերել
կը ցանկան, փութան իրենց հասցէն որո-
շակի գրել մեզ այժմէն որպէս զի Ա. Թիւրք
հրատարակած ժամանակ, իմացած լինինք
արդէն թէ քանի՞ բաժնորդ պիտի կրնանք
ունենալ և ըստ այնմ անենք մեր նախա-
պատրաստութիւններ: Թերթին վերաբեր-
եալ նամակ կամ ծրար կարելի է փոստով
ուղղակի ղրկել խմբագրին, Մ. Բորթու-
գալեան, Արմէնի փողոց, Թիւ 2 (Օթէլ
Ֆոռէ), ՄԱՐՍԻԼԵԱ (Ֆրանսա):

Համարատու

Խմբագիր-Տնօրէն

ՖԷԼԻՔՍ ԱՆՖԱՆԴԷՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. Զ. Դ.

Ազգային Հիւանդանոցի Որբանոցի
Ընտելարանին համար կառավարչի մը
պէտք կայ: Փափագողք կրնան դիմել
ի գրասենեակն Ազգային Հիւանդանոցի
Հոգաբարձութեան, Մեծ Նոր խան, Թիւ
49, պէտք եղած տեղեկութիւնն ստա-
նալու համար:

ՈՒԼՆԻԱ ԿԱՄ ԶԷՅԹՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ԱԻԱՆ Ի ԿԻԼԻԿԻԱ

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

Տեղական, Կենսական, Բանասիրական և
Լեզուաբանական.

Զէյթուն աւանի վրայ մանրամաս-
նօրէն գրուած սոյն ընտիր և ընդար-
ձակ գրքին պահուածներն արկածէ մը
մնասուած և միայն սակաւաթիւ օրի-
նակներ մնացած են քանի մը գլխա-
ւոր գրավաճառաց և կամուրջի մօտ
հայ ջրավաճառաց քով:

Գին 40 ղրուշ.

Բ. տպագրութիւնն չպիտի լինի մաս-
նաւոր պատճառով:

6—10

ՍԻՐԱՆՈՅՇ

(ՎԷՊ ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀ ՏԻԻՍՍԵԻ)

Տէր և Հրապարակչ

Յ. Զ. Ն. Ճ. Ի. Ր. Ճ. Ե. Ա. Ն.

Կը ծախուի բոլոր հայ գրավաճա-
ռաց քով, Բերա, Պ. Ուսայի գրա-
տունը, և Պահճէ-Գարու ջրավաճառ
Պօղոս և Յակոբ Աղաներու խանութ-
ները:

Գին 20 դահեկան արծաթ.

Արտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ